



338-98
9-64



51.7:6
L-63

06 APR 2010

ԻՆՉՈԳՈՒՏՆԵՐ Ե
ՏԱԼԻՍ ՑԱՆՔՍԵՐԻ
ԿՈՆՏՐԱԿՏԱՅԻԱՆ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹ. ԿԵՆՑՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՈ., ԽՈՄԿՎԱ 1980

123

338-98

1. 3 APR 2013

2-64

Կ

2. ԶԻՆՈՎՅԵՎ

ԻՆՉ ՈԳՈՒՏՆԵՐ Ե ՏԱԼԻՄ
ՑԱՆՔՍԵՐԻ

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ՈՒՐԴՅԱՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1930



12588-57

ԻՆՉ Ե ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Անցյալում, յերբ հիմնարկությունները կամ առանձին անհատներ իրար հետ պայմանավորվում եյին վորոշ ապրանքների կամ գյուղատնտեսական մթերքների նախնական գնումի մասին, վորով ծախողը պարտավորվում եր նշանակած ժամկետին և նախապես վորոշված գնով այսօքան ապրանք հասցնել գնողին, — այդպիսի առ ու ծախսի պայմանագրերը կոչվում եյին կոնտրակտ կամ կոնտրակտացիա:

Բայց կոնտրակտացիայի այդ հասկացողությունը ամենին կիրառելի չե այն պայմանավորումներին, վոր ներկայումս կատարում ե յերկրագործական կոռպերացիան կոլխոզների հետ, ցանողների արտադրական միավորությունների հետ կամ հողային համայնքների հետ: Յանքսերի կոնտրակտացիայի մասին պայմանագիր կնքելով կոռպերացիան պարտավորություն ե վերցնում իր վրա կոլխոզներին, միավորություններին կամ հողային համայնքներին ցույց տալ դրամական, արտադրական, ագրոնոմիական ոգնություն, վորի կարիքն զգում ե գյուղատնտեսությունը: Իսկ կոլխոզները, ցանողների արտադրական միավորությունները կամ հողային համայնքներն իրենց հերթին պարտավորություն են վերցնում իրենց վրա ընդարձակել իրենց ցանքսերը, բարձրացնել բերքայ-

Թարգ. Ռ. Ռ.

նությունը և իրենց հացի ավելորդը ծախել պետությանը և վոչ թե ազատ շուկայում։ Մրանից պարզ յել եռմ ե, վոր ցանքսերի կոնտրակտացիայի մասին կապվող պայմանագրերը, վորոնք պայմանավորվող յերկու կողմերի համար ել նախատեսում են տնտեսական կարևոր արտադրական պարտավորություններ, վոչնչով նման չեն առ ու ծախսի կոնտրակտներին։

Յանքսերի մեր կոնտրակտացիան վոչ այլ ինչ ե, յեթե վոչ պետության և բառակային, չքավոր ու միջակ տնտեսությունների կոռպակերացված միավորությունների յերկուստեք պայման-պատվեր։ Յանքսերի կոնտրակտացիայով պետությունը պատվեր ե տալիս այս տնտեսություններին, վորպեսզի արտադրեն պայմանագրով վորոշված քանակության ու վորակի հացահատիկ և կազմակերպվածորեն հանձնեն պետությանը։ Յանքսերի նույն այս կոնտրակտացիայով բարակային, չքավոր ու միջակ տնտեսությունները պատվեր են տալիս պետությանը, վոր իրենց ցույց տա անհրաժեշտ արտադրական, վարկային, ագրոտեխնիկական և ագրիկուլտուր ոգնություն, հայթայթի գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, և իրենց մատակարարի լայն սպառման ապրանքներ։

ԻՆՉՈՒՍԻՑԱՆՔԵՐՆԵՆ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Կոնտրակտացիայի գլխավոր խնդիրներից մեկն ե—դաշտային կուլտուրաների ցանքսի տարածություն-

ներն ընդարձակել և բերքայնությունը վորքան կարելի յեշատ բարձրացնել։ Իսկ անհատական կարգով և տնտեսությունը յետամմաց յեղանակով վարելու դեպքում իհարկե դա հնարավոր չե։ Մշակվող դաշտին նոր հողեր ավելացնելու համար, բարձր բերքայնության հասնելու համար հարկավոր են ահազին միջոցներ՝ քարշող ուժ, բարձրորակ սերմեր, կատարելագործված գյուղատնտեսական ինվենտար, պարարտանյութեր, ագրոնոմիական հսկողություն և այլն, վոր չեն կարող ունենալ միանձնյա չքավոր ու միջակ տնտեսությունները։

Դեռ տաս տարի սրանից առաջ Վլադիմիր Իլյիչ Լենինն ասում եր՝

«Միանձնյա տնտեսության ժամանակամեն գյուղացու բավարար քանակության սերմերով, անասունով, գործիքներով ապահովելու համար հսկայական չափով նյութական միջոցներ են պետք։ Այդ գեռ քիչ ե. յեթե մեր արդյունաբերությունը անսովոր հաջողություններ ունենար գյուղատնտեսական մեքենաներ արտադրելում, յեթե նույնիսկ յերկակայենք, վոր մեր բոլոր ցանկություններն ել կատարվեյին, մինչև անգամ այս դեպքում ել, հեշտ ե հասկանալ, վոր ամեն մեկ առանձին գյուղացուն արտադրության բավարար միջոցներ առլ—անհնար գործ ե և վերին աստիճանի վոչուացիոնալ, վորով հետեւ դա կնշանակեր սարսափելի փոշիացումն, միայն ընդհանուր, արտելային,

ընկերական աշխատանքի ոգնությամբ կարելի յե դուրս գալ այս փակուղուց:

Հետեապես նոր հողեր մշակելի դարձնել և բերքայնությունը բարձրացնել հասրավոր ե միայն չքավոր ու միջակ միանձնյա տնտեսությունները կոլեկտիվի վերածելով և այդ տնտեսությունների բոլոր միջոցները միացնելով, կոլխոզի ընդհանուր միջոցներ դարձնելով: Այստեղից հասկանալի յե, վոր ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագրեր կարող են կապվել միայն կոլխոզների հետ, ցանողների արտադրական միավորությունների հետ կամ հողային ամբողջ համայնքների հետ, վորոնք միանձնյա տնտեսությունների հողաբաժինները միացնում են հողային մեկ հոծ մասմխի:

Հայտնի յեն դեպքեր, յերբ գյուղի չքավոր ու միջակ տնտեսությունների միայն մի մասն ե մտել կոլխոզ կամ կազմել ե արտադրական միավորություն, իսկ չքավորության և միջակների մյուս մասը իր տնտեսությունը դեռևս տանում ե միանձնյա կարգով: Վորպեսզի նրանք ել հնարավորություն ունենան կոնտրակտացիայի յենթարկել իրենց ցանքսերը, նրանք պետք ե նախապես կազմեն գոնե ցանողների խմբակ, վորովհետև միանձնյա թեկուղ չքավոր տնտեսությունների հետ ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագիր չի կարելի կապել:

Կուլակային տնտեսությունների հետ ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագիր վոչ մի դեպքում չի կապվում: Կուլակային տնտեսությունները իրենց հացի ամբողջ պեղորդը պարտավոր են ծախել պետությանը գյուղապետների պարտադիր վորոշումների կարգով:

այն քանակությամբ, վորպիսին նշանակած կլինի նրանց հանձնվող ծանուցումներում:

Իլինսկոյե գյուղը կազմված եր 420 տանից. Նրա հողի ընդհանուր մակարդակն եր 3800 հեկտար, վորովից ցանվում եր 3000 հեկտար. մասցած 800 հեկտարը խամեր ելին, չվարած սնորներ և մեծ քանակությամբ ճանապարհներ ու կածաններ: Գյուղում կային 140 չքավոր և ուժապակաս տնտեսություններ, 30 բատրակային ու ձի չունեցող, 220 միջակ և 30 կուլակային տնտեսություններ:

Իլինցիք, հետեւելով կառավարության վորոշման, վճռեցին խամերն առնել ցանքսաղաշտի մեջ: Բայց վոր յեկավ գործին, պարզվեց, վոր բատրակ, չքավոր և ուժապակաս միջակ տնտեսությունների մի մասը ի վիճակի չե ավելացնել իր հողաբաժինը, վորովհետև ունեցածն ել չելին կարողանում բեջարել: Պարզվեց այն, վոր ով քարշող ուժ և յերկրագործական գործիքներ ավելի ունի, քան պետք ե իրեն, նա կարող ե ավելացնել իր հողաբաժինը: Իսկ սա կնշանակեր, վոր կուլակային ե ամենաունեոր տնտեսությունները պիտի հարստանային և գյուղի չքավոր մասին ավելի մեծ չափով պետք ե առնելին իրենց բուռը: Չքավորները դիմեցին տրակտորային կալոննային, վոր իրենց ոգնության հասնի: Բայց վորովհետև իլինցոց հողերը բաժանված ելին՝ սնորներով իրարից անջատված նեղ շերտերի, արակտորային կալոննան չկարողացավ իր վրա վերցնել իլինցիների ուժապակաս տնտեսությունների արտերի մշակումը:

Գյուղի ակտիվիտաները ընդհանուր ժողովի հրավիրեցին բատրակներին, չքավորությանը և միջակներին,

և իրենց դրությունը քննության առնելով, վճռեցին բոլոր իրենց հողաբաժինները միացնել հողային մի հոծ մասսիվի, վոչնչացնել սնորները, ավելորդ ճանապարհները, միացնել այդ մասսիվին նույնակես խամերը, մի խոռքով, վճռեցին ձևակերպվել կոլխոզ, Յեվ վորովհետեւ կուլակները տեղ չունին կոլխոզում, իսկ նրանց հողաբաժինները մեջընդմեջ ընկած եյին մյուս տնտեսությունների հողաբաժինների մեջ, ուստի ժողովը վորոշեց կուլակներին հատկացնել կոլխոզի սահմանում մի առանձնացած հողամաս։ Յերբ ժողովը հաշվի առավ բոլոր միացյալ չքավորմիջակ տնտեսությունների աշխատող անառունների, գութանների, ցանինների ու տափանների քանակությունը, պարզվեց վոր գրեթե պակասորդ չկա։ Ապա իլյինցիք նորից դիմեցին տրակտորային կալոննայի ողնության։ Մոտակա հացկոռպը (յերկրագործական կոռպերացիան) իլյինցոց կոլխոզի հետ կոնտրակտացիայի պայմանագիր կնքեց։ Սակավագոր և ձի չունեցող տնտեսություններին վարկ տվեց՝ բանող անասուն ու յերկրագործական գործիքներ վարձելու համար, իսկ տրակտորային կալոննան մշակեց հողի այն մասը, վորի համար կոլխոզի սեփական արտադրական միջոցները բավարար չեցին։

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ ՄԵԶՆՈՒՄ

Յանքսերի կոնտրակտացիա յե կատարվում նաև բուրժուական (կապիտալիստական) յերկրներում։ Յանքսերի կոնտրակտացիա յեր կատարվում նաև ցա-

րական Ռուսաստանում։ Բայց բուրժուական յերկրների կոնտրակտացիան մեր խորհրդային կոնտրակտացիայից տարբերվում ե նրանով, վոր բոլորովին ուղիղ նպատակներ ե հետապնդում։

Այս եղ, կապիտալիստների մոտ, ցանքսերի կոնտրակտներ են կապում հացի խոշոր տուղերը, առևտրականներն ու սպեկուլյանները։

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, ցանքսերի կոնտրակտներ ե կապում միայն պետությունը կոռպերացիայի միջոցով։

Այս եղ, կապիտալիստների մոտ, կոնտրակտացիայի յեն յենթարկվում միայն կալվածատերերի և խոշոր-կուլակային տնտեսությունների ցանքսերը։

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, կոնտրակտացիայի յեն յենթարկվում միայն կոլեկտիվ տնտեսությունները, վորոնց մեջ միացած են միայն բատրակները, չքավորներն ու միջակները, կամ՝ հողային համայնքների և ցանողների խմբակների ցանքսերը։ այս համայնքներն ու խմբակներով ցանողները նույնպես կազմված են բատրակ-չքավոր-միջակ տնտեսություններից։

Այս եղ, կապիտալիստների մոտ, վորքան ավելի հարուստ լինի կալվածատերը կամ կուլակ հողատերը, այնքան ավելի ավանս (նախավճար) են տալիս նրան կոնտրակտ կապող գնորդները։

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, դրամական ողնություն ե տրվում միայն չքավոր, բատրակ և սակավագոր տնտեսություններին կամ ուժապահու կոլխոզներին։

Այնտեղ, կապիտալիստների մոտ, ցանքսերի կոնտրակտացիան — միայն հացի առուծախս ե:

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, ցանքսերի կոնտրակտացիան՝ տնտեսական արտադրական փոխադարձ պարտավորություններ կատարելու յերկուստեք պայման-պատվեր ե:

Այնտեղ ցանքսերը կոնտրակտացնելիս կապիտալիստները միայն մի հոգս ունին — եժան գներով իրենց ձեռքը գցել ապագա բերքը և ստանալ խոշոր ոգուտներ:

Մեզ մոտ ցանքսերը կոնտրակտացնելով պետությունը հոգ ե տանում այն մասին, վոր՝

առաջին. շահագրգորի բատրակ, չքավոր ու միջակ տնտեսություններին ավելացնել ցանքսերը, բարձրացնել բերքայնությունը և լավացնել հողագործությունը.

յերկրորդ. ոգնել բատրակ, չքավոր ու միջակ անհատական տնտեսություններին, վոր վարեն միացյալ, կոլեկտիվ տնտեսություն.

յերրորդ. կարգավորել քաղաքի և գյուղի կանոնավոր (պլանային) մթերափոխությունը և յերկիրն ազատել հացի մշտական պակասությունից.

չորրորդ. բատրակ, չքավոր ու միջակ մասսաներին ապահովել ամենաբարձր գները և ամենամեծ ոգուտները իրենց հացի ավելորդը ծախելիս:

ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորպեսզի գործով ցույց տանք ցանքսերի մեր կոնտրակտացիայի և բուրժուական յերկրների կոնտրակտացիայի տարբերությունը, տեսնենք, պայմանագրով ինչպիսի պարտավորություններ ե վերցնում իր վրա ամեն մի կողմը: Սկսենք կոռպերացիայից:

Հայտնի յե, վոր բերքայնությունը կարելի յերարձրացնել միայն հողի կանոնավոր մշտակումով և ցանքսերը կուլտուրապես խնամելով: Սրա համար պետք ե, վոր դաշտային աշխատանքները սկզբեց մինչև վերջ կատարվեն ազրոնոմիական գիտությունների մեջ հմուտ մարդկանց հսկողության տակ: Սա անհրաժեշտ է մանավանդ՝ դաշտերում ազրոնմինիմումն անցկացնելիս: Յերկրում ազրոնոմներ քիչ ունենք և նրանք հնարավորություն չունին վերահասու լինել բոլոր առանձին կոլխոզներին կամ միավորություններին: Բայց ցանքսերի կոնտրակտացիան վերացնում է այս դժվարությունները: Յերկրագործական կոռպերացիան (հացկոոպ), պայման կապելով կոլխոզի, հողային համայնքի կամ ցանողների միավորության հետ, պարտավորություն ե վերցնում իր վրա կազմակերպել կոնտրակտացիայի յենթարկված տնտեսությունների ազրոնոմիական վերահսկողությունը: Բացի իր ազրոնում ուժերի անմիջական ոգնությունից, այս վերահսկողությունն արտահայտվում ե նրանով, վոր կոռպերացիան կազմակերպում ե բատրակների, չքավորների և միջակների ազրոանգրագիտության մասսայական մեկվեցիա: Կոլխոզների և ցանողների միավորությունների ընտրյալ ազրովիազորներին կոռպերացիան ուղարկում է կարճատև ազրոնոմիական հատուկ կուրսեր, ուր ընտրյալ լիազորները ձեռք են բերում ազրոնոմիական գիտելիքներ: Սրա շնորհիվ ամեն կոլխոզ և ցանողների ամեն միավորություն ստանում են միքանի ասանյակ սովորած կուրսավարտներ:

Բայց յուրաքանչյուր կոլխոզ, մանավանդ նոր կազմվածը, ունի արտադրության բավականաչափ մի-

Ամհրաժեշտ ե կոլխողի մեջ մտնող առանձին տնտեսությունների արտադրական միջոցների և գործիքների համայնացման համար մշակելու վորոշ կարգ ու պայմանները։ Պահն նախագծել անցնելու համար կոլեկտիվ հողագործության և գյուղատնտեսության բոլոր մյուս ճյուղերին — բանջարաբուծության, անասնապահության, թռչնաբուծության և այլն։

Հասարակական կոպեկը հաշիվ ե սիրում։ Կոլխողի յեկամտի և ծախսի ամեն մի հողվածը պետք է գրքի մեջ անցի։ Պետք ե հաշիվ պահի սերմացուի, ինվենտարի, բերքի, ապրանքային ավելցուելի, կոլխողի առանձին անդամներին տրված նատուրայի ու փողի, և այլն։ Պետք ե հաշիվ պահել կոլխողի անբաժանելի ֆունդերի, յուրաքանչյուր կոլխողնիկի կատարած աշխատանքի, նրա փայերի կուտակման մասին, և այլն և այլն։ Պետք ե գումար տալ յեկամուտի ու ծախսի բոլոր հոգվածները և պարզել կոլխողի գործնեյության հետևանքը, նրա պարտքերը, հետեւ վարկերի հանգցման և տոկունները վճարելու ժամկետներին և այլն։ Այլ կերպ ասած, կոլխողը պետք ե տանի կանոնավոր դրված հաշվետարություն։ այն ինչ հազվագյուտ կոլխող կարող ե իր ուժերով կատարել այս խնդիրը։ Յանքերի կոնտրակտացիայի պայմանագրով կոռպերացիան այս գործումն ել պարտավորվում ե ոգնել կոլխողներին։

Հիմա տեսնենք թե կապիտալիստական յերկրներում կոնտրակտացիայի ժամանակ հաց գնող առետրականներն ինչ պարտավորություններ են վերցնում իրենց վրա։ Այնտեղ պարտականությունները սահմանափակվում են միայն՝ նախապես պայմանա-

գորված գնով ընդունած հացի համար փող վճարելով, — ուրիշ վոչինչ։ Սրանից պարզ ե, վոր ԽՍՀՄ կոնտրակտացիան վոչ մի կերպ չի կարելի համեմատել կապիտալիստական յերկրների կոնտրակտացիայի հետ։ Մեր կոնտրակտացիան գյուղի բատրակ, չքավոր ու միջակ մասսաներին արտադրական ու տնտեսական մեծ ոգնություն ե ցույց տալիս։ Իսկ այնտեղ կոնտրակտացիան միայն — գնումն ե։

Բայց կարելի յե ասել՝ պայմանագրում՝ կոլխոզների ոգտին պարտավորություններ գրելու ուրիշ բան ե, իսկ այդ պարտավորությունների կատարելը՝ ուրիշբան։

Վորպեսզի կոնտրակտանսուղյուղացիների կասկածները վարատենք, պատմենք, թե ինչ են անում պետական ու կոռպերատիվ կազմակերպությունները՝ պայմանագրում նախատեսած պարտավորությունները կատարելու համար։

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՅԵՎ ԶԻԱՄԵՔԵՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

Դաշտերը տրակտորով վարելը տնտեսությունից 3—4 անգամ պակաս ժամանակ ե խլում, բացի դրանից, այնքան բանվոր ձեռքեր չի պահանջում, ինչքան պետք ե կենդանի քարշող ուժի գեպքում։ Ազատ ժամանակը, ազատ բանվոր ձեռքերը կարելի յե ուղղել գեպի գյուղատնտեսության մյուս ճյուղերը՝ կենդանաբուծություն, թռչնաբուծություն, բանջարաբուծություն, այգեգործություն և այլն, վորոնք յերկրի համար նույնքան նշանակություն ունին, վորքան և հողագործությունը։ Բացի այդ, մեծ տարբերություն կա նաև բերքի պարանքայնության մեջ։ Դաշտերը տրակտորով մշակելու գեպքում կարիք չի մնի շատ

բոլոր կոլխոզներին տրակտորներ մատակարարել:
Ուստի ԽՍՀՄ հողժողկոմը 1930 թ. հունվարի 7-ին
վորոշել է՝

«Պետք ե բոլոր կոլխոզներում ապահովել ձիյերի բազաների և խառը ձիատրակտորային բազաների ստեղծումն՝ ամբողջ կանխիկ, կենդանի և անկենդան ինվենտարի և կերի ռեսուրսների համայնացման միջոցով»:

Հետևապես, յեթե կոլխոզի ունեցած տրակտորները չեն կարող լիովին բավականացնել ցանվող արտերը, այդ գեպօւմ կոլխոզը պետք ե միացնի բոլոր լծկաններին և կազմի ձիատրակտորային բազա։ Յեթե կոլխոզը նոր ե կազմակերպվում ու դեռևս տրակտորներ չունի, նոր կազմվող կոլխոզի անդամները պետք ե համայնացնեն բոլոր լծկաններին և առանձին չքավորմիջակ բոլոր տնտեսությունների գյուղատնտեսական ինվենտարը և կազմեն կոլխոզի ձիամեքենային բազա։

Կուլակների ագիտացիայի ազդեցությամբ մի քանի չքավորմիջակ տնտեսություններ կոլխոզ մտնելուց առաջ ծախծինում են իրենց ձիյերն ու ինվենտարը, մտածելով թե «պետությունը կոլխոզին տրակտորներ պիտի տա»։ ԽՍՀՄ հողժողկոմը հունվարի 7-ի իր վորոշման մեջ ցույց ե տալիս հետևյալը։

«Այն տնտեսությունների դեմ, վորոնք կոլխոզ մտնելուց առաջ վոչնչացնում են իրենց կենդանի և անկենդան ինվենտարն ու անասունների կերը, կամ ձին ու մեքենան համայնացնելուց հետո սկսում են

անխնամ վերաբերվել նրանց, — պետք ե ձեռք առնել հասարակական ներազդման ամենավճռական միջոցներ, մինչև իսկ մերժելը կոլխոզի մեջ ընդունել, կամ կոլխոզի կազմից դուրս հանելը. կոլխոզները վճռականորեն մի քանի որվա ընթացքում պետք ե վերջ դնեն անասունները ծախծինելուն ու վոչնչացնելուն»։

Վորպեսզի դաշտային աշխատանքները չձգձգվեն, արագ և ավելի լավ կատարվեն, բավարար չափով տրակտորներ չունեցող կոլխոզները պետք ե ունենան լծկանների մեծ քանակություն, ուստի հողժողկոմն իր վորոշման մեջ ցույց ե տալիս։

«Կուլակների ծախած կամ կուլակներից բոնագրված ձիյերի հաշվին պետք ե ուժեղացնել կոլխոզների ձիյերի (լծկանների) կազմը»։

Մը հետ միաժամանակ, կոոպերացիան և պետական հիմնարկությունները, բացի մեքենա-տրակտորային կայաններից, կազմակերպում են նույնպես խառը ծիա-տրակտորային և մեքենա-ծիային կայաններ։ 1930 թվի գարնանացանին այդպիսի կայաններ կազմակերպված են մինչ 4000, վորոնց մեջ միացված են մեկ միլիոնից վոչ պակաս ձիյեր։ Ամեն մի այդպիսի ձիամեքենական կայանում պետք ե լինեն 400 լծկան ձիյեր, 250 գութան, 125 տափան, 60 կուլտիվատոր, 30 ցանիչ, 22 հնձիչ և այլ գյուղատնտեսական մեքենաներ։ Ամեն մի այդպիսի կայան պետք ե բավարարի վոչ պակաս, քան 2500 հեկտար ցանքսի կարիքները։

Ամեն կոլխող, կազմակերպելով ձիյերի իր բազան,
միևնույն ժամանակ պետք ե ձգտի, վոր քարշող կեն-
դանի ուժը ըստ հնարավորին շուտով փոխարինի
տրակտորայինով, իսկ գութաններն ու գյուղատնտե-
սական մյուս ինվենտարը—փոխարինի բարդ և տրակ-
տորին կցվող ուժեղ ինվենտարով։ Այդ նպատակով
կոլխողը, ցանքսերը կոնտրակտացիայի յենթարկելիս,
ուայոնի կոռպերատիվին պետք ե պատվեր տա, վոր
նրա համար բերել տա տրակտորներ, սրանց կցվող
ինվենտարը, գյուղատնտեսական բարդ մեքենաներ և
այլն, սրա համար պետք ե կոռպերացիային տա վո-
րոշված չափով կանխավճար, վորպեսզի ապահովի իր
պատվիրած մեքենաների ժամանակին ստացվելը։ Կոռ-
պերացիայի հավաքած կանխավճարները կտրվեն մեր
արդյունաբերության, վորը կընդարձակի զավոդները,
կարագացնի նրանց սարքավորումը և կարող ե կոլ-
խողներին ավելի քանակությամբ տրակտորներ ու
գյուղատնտեսական մեքենաներ տալ։

Վորպեսզի հնար լինի կոլխոզների տրակտորային
պահանջը բավարարել, մոտակա մի քանի տարիները
հարկ կինի մասամբ գնել արտասահմանում, իսկ դրա
համար պետությունը պետք ե հնարավորություն
ունենա արտասահմանում ծախել վորքան կարելի յե-
շատ մթերք, վորպիսին ունի ԽՍՀՄ, Խոսքը միայն
հացի մասին չե։ Արտասահմանին մենք կարող ենք ծա-
խել զանազան խոտեր, վոսկոր, յեղջյուրներ, աղիքներ,
սմբակներ, անասունների մորթելուց ստացվող ամեն
տեսակի մնացորդներ, և գյուղատնտեսության այլ յեր-
կրորդական մթերքներ։ Ուստի կոլխողը ցանքսերի կոն-
տրակտացիա կապելիս, պետք ե կոռպերացիայից

իմանա այն մթերքների անունները (նոմենկլասուրա),
վորոնք կոլխողը կարող է ներկայացնել արտասահ-
մանում ծախելու համար։ Ապա կոլխողը պետք ե
հաշվի, թե այդպիսի մթերքներ ինքը վորքան կարող
ե հավաքել։ Այդ քանակությունը պետք ե գրել պայ-
մանագրի մեջ վորպես հատուկ պարտավորություն,
վորպեսզի այդ մթերքներն անպատճառ հավաքվեն
ու տրվեն կոռպերացիային։ Գյուղատնտեսական այդ
յերկրորդական մթերքների համար արտասահմանում
ստացված փողով պետությունը կգնի տրակտորներ և
նրանց կցվող գործիքներ ու կհասցնի կարիք ունեցող
կոլխոզներին։

ՄԵՐՄԱՑՈՒԻ, ԻՆՎԵՆՏԱՐԻ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ

Ինչպես ասացինք, կոռպերացիան ցանքսերի կոն-
տրակտացիայի պայմանագրով իր վրա պարտավորու-
թյուն ե վերցնում լավացնել կոլխոզների և ցանող-
ների արտադրական միացությունների սերմացուն և
նորոգել նրանց գյուղատնտեսական ինվենտարը։ Այդ
պարտավորությունները կատարելու համար հացկոռպ-
ներն ու վարկային ընկերությունները կազմակերպել
են սերմատող կայաններ, վորոնք հողժողկոմի և հաց-
միության (Сօյօչխլեբ) կայանների հետ միասին պիտի
մաքրեն բատրակ, չքափոր ու միջակ տնտեսություն-
ների գրեթե ամբողջ սերմացուն, այդպիսով ապահո-
վելով բերքայնության զգալի բարձրացումը։ Սակավա-
զոր կոլխոզների և ձի չունեցող գյուղացիների սեր-
մացուն մաքրելու համար սարքի յեն գցված սայլեր,
վորոնք այդ տնտեսություններին կազմաեն սայլ վար-

ԿՈՒԽՈՉՆԵՐԻ ՅԵՎ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Հիմա թվենք զլխավոր պարտավություններն այն կոլխոզների, հողային համայնքների, միավորությունների և ցանողների խմբակների, վորոնք իրենց ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագիր են կնքել: Այդ պարտավորությունները յերկու տեսակի յեն՝ առաջին՝ պարտավորություններ կոոպերացիայի նկատմամբ, յերկրորդ՝ պարտավորություններ իրենց նկատմամբ, այսինքն իրենց տնտեսությունների նկատմամբ:

Կոմունաների, արտելների և հողը միասին մշակելու նպատակով կազմած ընկերությունների թե դեպի կոոպերացիան և թե դեպի իրենց ունեցած պարտավորությունները տարբեր են այն պարտավորություններից, վոր ունին հացահատիկային ընկերությունները, հողային համայնքներն ու ցանողների խմբակները:

Սկսենք կոմունաների և արտելների պարտավորություններից: Այդպիսի կոլխոզը, սովորաբար, մի քանի տարով ե կոնտրակտացիայի պայմանագիր կնքում, այսինքն ցանքսաշանիք ամբողջ տեղության համար: Ռւստի կոլխոզը պարտավորվում ե իր մոտ անցկացնել հողի լրիվ կարգավորումն և լիովին իրագործել իր տնտեսության վերակառուցման պլանը, վոր մշակելու յերկրագործական կոոպերացիան: Այդ պարտավորություններն են՝

Առաջին. կոլխոզի հողերի ամբողջ մակերեսությունը մտցնել այն ցանքսաշրջանը, ինչ նախագծած ե որգանիզացիոն պլանում: Կոլխոզը պայմանագիրը կնքե-

լուն պես առաջին իսկ ցանքսից պետք ե անցնի նոր ցանքսաշրջանին և վերջացնի այդ ցանքսաշրջանը պլանի նախատեսած ժամկետին:

Յերրորդ. ցանքսաշրջանի վերջում ցանքսի մակերեսությը մեծացնել վոչ պակաս քան այսքան հեկտարով (պայմանագրում ցույց ե տրվում ճիշտ քանակությունը). այդ մեծացումը պետք ե կատարվի ամեն տարի թե աշնանացան և թե գարնանացան հողերին կցելով դատարկ ու խամ հողեր: Նոր խամ հողերի կցումն ապահովելու համար կոլխոզը պլանը կազմելիս պետք ե նոր հողերը բաժանի ցանքսաշրջանի գանձագան տարիներին հատկացվող առանձին արտերի, և հողաշինարարությունն անցկացնելիս նոր հողերի վրա ել պետք ե սահմանանշաններ շարի:

Յերրորդ. թե կոլխոզի ընդհանուր միջոցները և թե իր առանձին անդամների միջոցները կոլխոզի տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցման ժամանակ գործադրել որգանիզացիոն և արտադրական պլանի համաձայն: Ցնտեսության վերակառուցմանը անհրաժեշտ ե սեփական միջոցներով մասնակցել նրա համար, վորպեսզի կոլխոզի բոլոր անդամները խիստ շահագրգռծված լինեն տնտեսությունը զարգացնելում, ապրաքային նոր պրոդուկցիա ստեղծելում, յեկամուտի նոր աղբյուրներ ստանալում: Հասկանալի յե, վոր դրան կարելի յե հասնել կոլխոզի առանձին անդամների ունեցած ինվենտարի, լծկան ու կթվող անսասունների, լծելու սարքի լրիվ և խիստ կանոնավոր ոգտագործումով: Ռւստի կոլխոզը պետք ե իր վրա պարտավորություն վերցնի կոլխոզի բոլոր անդամներից հավաքել փայտվճարները, ամբողջ շրջա-

նառությունից վորոշ տոկոս մուծելով կոլխոզի գանձարկը, կազմի անբաժանելի ֆոնդ, վորը պետք եռ ունենա նպատակային նշանակություն, այսինքն դրանով պետք ե գնավեն արտադրության նոր միջոցներ և խոշոր ու մանր կթի անասուններ (կովեր, վոչխարներ, խոզեր): Ապա կոլխոզը պիտի հանրայնացնի իր առանձին անդամների գյուղատնտեսական ինվենտարը, քարշող ուժը և կթու անասունները, իր անդամների մեջ պիտի բաշխի աշխատանքային պարտավորությունները, վորոշի աշխատանքի ժամերը, վարձատրության չափը և այլն:

Չորրորդ . կոլխոզը հաշվի պիտի առնի, վոր վոչ միայն իր, այլև յերկրի բոլոր գյուղացիական տնտեսությունների հացի ավելորդը պետք ե տրվի պետությանը բերքը հավաքելուց յերկու-յերեք ամսվա ընթացքում: Վորովհետև այդպիսի կարճ ժամանակամիջոցում հացի այդպիսի մասսայական հանձնումն կարող ե վորոշ դժվարություններ ստեղծել ընդունած հացի գինը վճարելու կողմից, կոլխոզը վորոշում պիտի հանի ժամանակ տալ կոռպերացիային՝ կոնտրակտացիայով հանձնած հացամթերքների գինը վճարելու համար:

Կոլխոզի հետեւյալ պարտավորությունները այն ուղղությունն ունին, վոր բերքայնությունը ամենամեծ չափով բարձրացնեն: Այդ նպատակով կոլխոզը պարտավոր է տնտեսության մեջ պահպանել նրա արտադրական պլանում նախատեսված բոլոր ազգութեանիկ պայմանները և կիրառել այդ ուայնի համար գործկոմի վորոշած ազգումինիմումը:

Սրա համար կոլխոզը պետք ե

Առաջին . կիրառե գարնան վաղաժամ ցելը. գարնանացան բոլոր հողերը՝ աշնանը վարել ձյունի տակ թողնելու համար. հողը պարարտացնել արհեստական պարարտանյութերով, վոր ստացվում են կոռպերացիայից ըստ կոնտրակտացիայի պայմանագրի:

Յերկրորդ . լիովին ոգտագործել կոլխոզում յեղած շարքացան մեքենաները, այնպես վոր հնարյեղածին չափ տարածություն (մասսիվ) ցանած լինի շարքացանով: Կոլխոզի ամեն մի անդամ պետք ե հիշի, վոր շարքացանը, բացի սերմի խնայողությունից, ապահովում ե բարձր և միահավասար բերքը: Բերքայնության բարձրացմանը նպաստում են նաև տեսակավոր սերմերը: Մեծ հողամասերում կանոնավոր և ազգունումիական համապատասխան կանոնների պահպանելու դեպքում տեսակավոր ցանքսը բերքայնությունը հաճախ բարձրացնում ե ավելի քան 25 տոկոս՝ համեմատած սովորական սերմերի բերքայնության հետ: Հաջողությունն ավելի ապահոված կլինի, յեթե սերմերը բավարար կերպով սրսկած, լավ մաքրած և չոկած լինեն: Ուստի կոլխոզն իր վրա պարտավորություն պիտի վերցնի իր արտերը ցանել մաքուր տեսակի սել երև և պահպանել թված կանոնները:

1. Մւ ատարածություններ (մասսիվ) ցանել մեկ կուլտուրա: Վորոշ տեսակով: Մյուս բույսերի հարկան ցանք երից կամ թե այդ տեսակավոր կուլտուրայի մյուս ահսակներից ցանքսը պետք ե գտնվի ազգունումի ցուց աված հեռուվորության վրա:

Բացի այդ, կոնտրակտանտ-ցանողները կոնտրակտացիայով ստացած սերմերից բացի — իրենց հողերում այլևս վորեւ այլ տեսակի սերմեր չպիտի ցանեն:

2. Ստացվող հացահատիկը չկեղտոտելու համար ցանողները պարտավոր են ամեն տեսակավոր ցանքսի բերքի հավաքումն կատարել իրենց մյուս ցանքսերի բերքի հավաքումից առանձին։ Տեսակավոր ցանքսերի բերքը ծեծել վերջացնել, ապա անցնել նույն կուտուրայի վոչ-տեսակավոր ցանքսերի բերքի ծեծելուն։ Ծեծելուց առաջ ծեծիչները և գյուղատնտեսական մյուս անհրաժեշտ ինվենտարը նաև շենքը ուր ծեծում են հացը, հարկավոր ե մաքրել ինչպես պետք ե։

3. Հացի վնասատուները — «յերկարադունչ» կոչվող վոջիլը և գյանան — բազմանում են ամբարներում և ցորենի կամ ալյուրի հին պարկերում։ Նրանցից ազատվելու համար կոնտրակտանտ-ցանողները պարտավոր են տեսակավոր հատիկները տեղափոխելու կամ պահելու համար պատրաստած բոլոր պարկերը խնամքով մաքրել, ֆորմալինով սրսկել, խակ ամբարներն ու պահեստները նրանց մեջ հատիկներ լցնելուց առաջ ողափոխել, մաքրել և ախտահանել։ Յեթե ցանողները միջոցներ չունեն ախտահանելու և սրսկելու համար, պարտավոր են դիմելու հողժողկոմի մոտակա ախտահանող կամերային կամ գյուղատնտեսական կոռպերացիային, վորոնք հարկավոր ոգնությունը ցույց կտան։

Յերբորդ։ կազմել սերմացուի կոլեկտիվ ֆոնդ և սերմեր պատրաստել վոչ միայն առաջիկա մոտիկ ցանքսի համար, այլև հետեյալ տարվա համար, վորպեսի վոչ մի պատահականություն տեղի չունենա։

Անցյալ կոնտրակտացիաների ժամանակ դեպքեր են յեղել, վոր տնտեսությունները կոռպերացիայից ստացած վարկերը ծախսել են վոչ ըստ պատկանելույն։ Որինակ, այն փողը վոր ստացել եյին լծկան

գնելու համար, ծախսել են ծեծիչ գնելու վրա, կամ վոր ավելի վատ ե, բաժանել են իրենց մեջ և ամեն մեկն իր ստացած բաժինը ծախսել եր իր սեփական տնային կարիքների վրա։ Հետևանքը յեղել եր այն, վոր այդ տնտեսությունները չեյին կարողացել հողերին միացնել ամբողջ այն տարածությունը, վոր նախատեսած եր յեղել կոնտրակտացիայի պայմանագրով, — մի բան, վորից վնասվում եյին թե պետությունը և թե տվյալ գյուղացիական տնտեսությունները։ Ուստի կոլխոզը պետք ե պարտավորություն վերցնի իր վրա ստացած վարկերը ծախսել բացառապես այն արտադրական նպատակների վրա, վորոնց համար վարկը բաց և թողնված։

Զորբորդ։ կոլխոզը պետք ե գիտակցի, վոր ինքը ծառայելու յե վորպես որինակելի, վորպես ցուցիչ շրջակա գյուղացիության համար, վոր դեռևս չի միացել, կոմունա կամ արտել կազմել։ Այդ խնդիրը կատարելու համար կոլխոզը պետք ե ոգնի չքափորմիջակ տնտեսություններին վոչ միայն խորհրդով, այլև գործով։ Առաջին հերթին խոսքը վերաբերում է ազնիվ տեսակի սերմեր տարածելուն։ Վորովինետե կոլխոզի բոլոր ցանքսերը ազնիվ տեսակի յեն, և այն հացահատիկը, վոր մնում է կոլխոզին իր անձնական պարենավորման ու ֆուրաժային կարիքների համար, նույնպես ազնիվ տեսակի յե, ուստի կոլխոզը պետք ե պարտավորություն վերցնի իր վրա կոռպհացմիության գեկավարությամբ իր ազնիվ տեսակի սերմը փոխանակել շրջակա գյուղացիական տնտեսությունների հետ սովորական սերմով կամ դարձյալ ազնիվ տեսակի, բայց համեմատաբար ցածր վորակի սերմով։

Կոմունաները, արտելները պիտի ձգտեն, վոր նրանց տնտեսությունը ներկայացնի վոչ միայն հացահատիկային ճյուղը, այլ ունենա նաև կենդանաբուծություն, այգեգործություն, խոտաբուծություն և տնտեսության այլ ճյուղեր։ Յեվ տնտեսության բոլոր ճյուղերն ել բացի կոլխոզի սեփական կարիքները բավարարելուց պետք ե տան զգալի ապրանքայնություն, այսինքն ավելցուկ՝ պետությանը ծախելու համար։ Սրան կարելի յե հասնել միայն այն դեպքում, յեթե կոլխոզը տնտեսության այդ ճյուղերումն ել կիրառի ազրոնումիական ձևեր և կուլտուրական միջոցներ։

Որինակ, կենդանաբուծության հաջող զարգացման համար անհրաժեշտ ե կենդանիներին պահել չոր, լուսավոր և տաք շենքերում, ժամանակին և չափով կեր տալ նրանց, կանոնավոր խնամել և այլն։ Սա հնարավոր ե, իհարկե, այն դեպքում, յեթե անասուններին պահելու համար կոլխոզը զինի անասունների հասարակական բակ, սիլոսային աշտարակներ կամ փոսեր՝ կերը սիլոսացնելու համար, ծավալի խոտացանքը, մանավանդ յոնջան, և այլն։

Այգեգործության հաջող զարգացման համար անհրաժեշտ պտղատու ծառերը տնկել կանոնավոր, ժամանակին պարաբռանյութ տալ նրանց, կռվել մասսատու միջատների դեմ, սրսկել, ջրել և այլն։

Կոլխոզն իր այս բոլոր պարտավորությունների մասին պիտի դրի կոնտրակտացիայի պայմանագրի մեջ, հիշելով վոր այս և վերը հիշած պարտավորությունների կատարելլ մեծ ոգուտ կբերի իենց իրեն կոլխոզին։

Տնտեսության ազրոտեխնիկական և զուտեխնիկական (կենդանաբուծության վերաբերող) բարելավում-

ներին հատկացրած դրամական հատուկ գումարներ (ֆոնդ) ունենալու համար կոլխոզը կոռպերացիայից իր տված մթերքների համար փող ստանալիս պետք ե ստացած գումարներից մի փոքր տոկոս յետ դնի։ Այդպիսի խնայումներ կոլխոզի համար ծանր չեն լինի, բայց դրանից կարող են կազմվել մեծ ֆոնդեր։ Ուստի ավելրդ չի լինի պայմանագրի մեջ մտցնել և այդ պունկտը՝ ծախած պրոդուկցիայից ստացվող գումարներից կոլխոզի առանձին ազրոփոնդ ստեղծելու նպատակով հատուկ յետ-դնումների մասին։

Կոլխոզի անդամներին ապրանք ու մթերքներ են պետք, ինչպես որինակ լուցկի, նավթ, սապոն, շաքար, մանուֆակտուրա, կաշի, վոտնաման, մեխ և այլն։

Այդ ապրանքները կարելի յե ճարել սպառողական կոռպերացիայում։ Բայց պետք ե, վոր նա այս ապրանքները բերի կոլխոզի ռայոնը։ Վորովհետև յերկրագործական կոռպերացիան (հացկոոպը) ըստ կոնտրակտացիայի պարտավորություններ եր վերցրել իր վրա կոլխոզի հանդեպ, ուստի սպառողական կոռպերացիան տվյալ վայրում կունենա հիշած ապրանքները և կմատակարարի կոլխոզիկներին, բայց պետք ե, վոր կոլխոզը կոլեկտիվորեն անդամադրիթ սպառողական կոռպերացիային։ Հացկոոպը պիտի ոգնի կոլխոզին ձեակերպել իր անդամությունը սպառկոոպերացիային։ Այս յերկուստեք պարտավորությունը նույնպես ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագրի պայմաններից մեկը պիտի լինի։

Վերջապես վերջին պարտավորությունը, վոր վերցնում ե իր վրա կոլխոզը—դա այն ե, վոր նա պարտավորվում ե իր ամբողջ ապրանքային պրոդուկցիան,

այսինքն իր հացի և գյուղատնտեսական մյուս մթերք-ների ամբողջ ավելցուկը նախատեսած ժամկետներին տալ նշանակած պունկտերին կոռպերացիայի ցուցմունքով և պետական գներով:

Այսպիսով մենք տեսնում ենք, ցանքսերի կոնտրակտացիայի պայմանագրով կոլխոզի վրա ընկնող բոլոր վերը հիշած պարտավորություններից միայն մեկ պարտավորություն ե, վոր կոլխոզն ունի կոռպերացիայի հանդեպ, այն ե՛ իր ավելցուկների հանձնումը, մասցած բոլոր պարտավորությունները — պարտավորություններ են իր իսկ առաջ, այսինքն իր կոլեկտիվ անտեսության առաջ:

* * *

Դյուղացիական տնտեսությունների արտադրական ամենապարզ միավորություններում կոնտրակտացիայի պայմանագրով պարտավորությունները քիչ ավելի պարզ են, քան կոմունաներում և արտելներում:

Առաջին. պայմանագիր ե կնքվում միայն մեկ տարվա կոնտրակտացիայի համար, այսինքն մեկ աշնանցանի և մեկ գարնանացանի համար:

Յերկրորդ. պայմանագրերով նախատեսվում են ցանել վոչ միայն աղնիվ տեսակի, այլ և սովորական սերմեր:

Յերրորդ. հողակառուցման, կենդանաբուծության, այգեգործության և գյուղատնտեսության նման ճյուղերի հարցը չի մտնում պայմանագրի մեջ վորպես պարտավորեցուցիչ կետ։ Միենույն ժամանակ պայմանագրում այդպիսի կետի բացակայելը ինարկե չի նշանակում թե կոմունան, արտելը կամ ընկերությունը չպետք ե բավարար ուշադրություն և ժամա-

նակ նվիրեն իրենց կոլեկտիվում կամ ընկերության մեջ տնտեսության այդպիսի կարևոր ճյուղերի զարգացման, ինչպիսին ե կենդանաբուծությունը, այգեգործությունը և այլն։

Չորրորդ. կոլխոզը կամ ընկերությունը, պարտավորություն վերցնելով իր վրա՝ կոոպերացիայի միջոցով պետական գներով տալ պետությանը իրենց հացի ամբողջ ավելցուկը, պայմանագրում նշանակում ե նաև հացի մինչմաս և հաստատ քանակությունը, վորը պիտի հանձնվի ամեն տեսակից և ամեն բերքից։

ՀՈՒԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հողային համայնքներն ու հացահատիկային ընկերությունները պայմանագրի են ստորագրում նույնպես մեկ տարվա աշնանցանի ու գարնանացանի մասին։ Նրանք պայմանագրով պարտավորվում են ընդարձակել հացահատիկային ցանքսերի տարծությունը վորոշ քանակության հեկտարով և կատարել բոլոր դաշտային աշխատանքները՝ պահպանելով տվյալ ուայոնի համար վորոշված ագրոմինիմումը։

1. Կոնտրակտացվող գարնանային հացի ցանքսը պետք ե կատարել՝ ճյունի տակ մնացող աշնանավարը կատարելուց հետո։ Իսկ յեթե կոնտրակտանտցանողները ճյունի տակ մնալու աշնանավարը չեն կատարել, այդ դեպքում ցանողները պարտավոր են կատարել վաղ գարնանավար՝ անպայման կուլտուրական յեղանակով (վարել գութանով, ատիանել յերկաթե ատամներ ունեցող տափանով)։

2. Կոնտրակտանտցանողները պետք ե ցանեն անպայման տեսակավոր, մաքրած և ծլելու ընդունա-

կությունը ստուգած սերմ։ Յեթե ցանողները չունեն
քամհար կամ սերմերը ջոկելու ու մաքրելու այլ մի-
ջոցներ, նրանք պայմանագրով պարտավորվում են
իրենց սերմացուն տանել հողժողկոմի կամ գյուղա-
տնտեսական կոոպերացիայի մոտակա սերմ մաքրող
կայանը կամ ջրաղացը, ելեվատորը կամ հացմիու-
թյան մթերողական պունկտը, ուր նրանց սերմացուն
կմաքրեն։ Մինչև այժմ ել շատ գյուղացիներ կասկա-
ծով են վերաբերվում պետական և կոոպերատիվ սերմ
մաքրող կայաններին։ Ինարկե, զիբիլ և այլ խառ-
նուրդ պարունակող ցորենը սեպարատորից կամ քամ-
հարից անցնելուց հետո մաքուր դրությամբ ավելի
պակաս կքաշի։ Այս հանգամանքը հաշվի չառնելով
մի քանի գյուղացիք, նկատելով քաշի պակասորդը,
յենթադրում են վոր պակասորդը սերմ զտող կա-
յանն ե վերցրել, վորպես զտելու վարձ։ Մյուս-
ները հասկանալով հանդերձ, վոր հացի քաշի պակա-
սելն առաջացել է նրանից, վոր միջից դուրս են հան-
ված զիբիլը և այլ խառնուրդները, չեն կարողանում
հաշտվել այն մտքի հետ, վոր նրանց սերմացուի քաշը
պակասում ե։ Բայց միթե հասկանալի չե, վոր զիբի-
լից ու խառնուրդից, ինչքան քաշ ել նրանք ունենա-
յին, հացահատիկ չի ստացվի։

3. Գյուղացիական տնտեսությունների հացահա-
տիկների մեծ քանակություն վնասված ե լինում փո-
շեսունկից, «թող»-ից և ժանղից։ Այդպիսի սերմերի
ցանքը չի կարող լավ բերք տալ։ Փոշեսունկից ու
ժանղից վնասված սերմերից ստացվում ե վտիտ ու
թույլ հասկ, հատիկն ել նվազ ե լինում։ Ստացվում ե
գժգույն և ցածր բնույթի հացահատիկ։ Լավ վորակի

հացահատիկ ստանալու համար կանուգակատանու-
ցանողները պարտավոր են սերմացուն
սրսկման յենթարկել։ Յեթե նրանք չունին
ազգությունիական վարչությունից հավանություն ստա-
ցած միջոցներ սերմ սրսկելու համար կամ նրանք
չեն կարող իրենք այդ սրսկում կատարել ինքնուրույն,
պետք ե իրենց սերմացուն տանեն հողժողկոմի, գյու-
ղատնտեսական կոոպերացիայի կայանը կամ հացմի-
ության պունկտը, ուր նրանց սերմացուն կարսկվի։

4. Հին ձևերով կատարվող ցանքսը ամենեին
ձեռնտու չե։ Այդպիսի ցանքսը չի տալիս կանոնավոր
և հավասար բերք, սերմերի մեծ քանակություն զուր ե
կորչում։ Իսկ շարքացան ցանիչով ցանելու դեպքում
սերմի խնայողություն ե կատարվում, բերքը ամբողջ
արտում ստացվում ե հավասար, հատիկն ել միահա-
վասար ու լիովին լցվում ե։ Ուստի կոնտրակտանու-
ցանողները պայմանագրով պարտավորվում են կոն-
տրակտացիայի յենթարկվող հողամասսերը
այնպայմանուրեն ցանել շարքացան ցանի շ-
ներով։ Իսկ յեթե նրանք այդպիսի ցանիչներ չու-
նեն, պիտի վերցնեն հողժողկոմի վարձակայաններից
կամ գյուղատնտեսական վարկային այն ընկերու-
թյուններից, վորոնց հետ ցանողները պայմանագիր են
կնքել։ Իսկ յեթե վոչ մի հնարավորություն չկա շար-
քացան կատարելու, թույլատրվում ե այլ ձևի ցանքս,
բայց միայն մոտակա ազրոնոմիական պունկտի ցու-
ցումով։

Վերխովյե գյուղում կա 680 բատրակ., չքավոր ու մի-
ջակ տուն։ Նրանք գեռ ևս կոլմող չեն կազմում։ Բայց
ցանքսերը կոնտրակտացնելու համար նրանք վորոշ-

ցին բոլորը միասին, ամբողջ հողային համայնքով պայմանագիր կնքել, ի հարկե, նախապես կուլակներին հատկացնելով մի առանձին հողամաս չարյուրից ավելի չքավոր տնտեսություններ տարեց տարի իրենց սեփական միջոցներով չքավարարվելով, հարեվաններից վարձում եյին ձի լծելու սարք, գութան կամ տափան. քամհարի մասին խոսք ել չեր կարող լինել. գրեթե բոլոր տնտեսությունները, այդ թվում նաև միջակները, գնում եյին գլուխ վեր բերելու տեղական կուլակներին. Խսկ բատրակները իրենց հողաբաժինը կապարով եյին տալիս կուլակներին և իրենք ել ծախում եյին նրանց ծառայության մի փոր հացի: Յերբ վերխովցիք կոնտրակտացիայի պայմանագիր կնքեցին, և կոնտրակտացրած հողերի մեջ, իհարկե, մտցրին նաև բատրակների հողաբաժինները, դուքս յեկավ, վոր 150 տնտեսությունից ավելին չեն կարող կոնտրակտացրած մակերեսութը բեջարել իրենց ուժերով (քարշող ուժով ու գյուղատնտեսական ինվենտարով), Բայց 70 միջակ տնտեսություններ գյուղատնտեսական ինվենտար և քարշող ուժ ավելի ունեյին, քան պետք եր ցանքսերի նրանց բաժինը մշակելու համար: Այդ հանգամանքը պարզվելուն պես համայնքի չքավոր մասը ոգնություն ինդրեց միջակներից, վորոնք քարշող ուժի և ինվենտարի ավելորդ ունեյին:

Սրանք համառեցին.

— Մենք կոլխոզ չենք, ձիս ու գութանս ձրի չեմ տա, — ասում եյին նրանք.

— Իմ ձիյերը աշխատել են իմ հողաբաժնում և բավական ե, ձի չեմ տա, պետք ե, ճարիք, վորոնք կամենաս, — ասում եյին մյուսները:

Բայց վեճը յերկար չտէեց: Կոռպերատորները բացատրեցին, վոր ցանքսերի կոնտրակտացիայով համայնքի կամ ընկերության անդամները պարտավոր են իրար ողնել: Յեթե մի քանի տնտեսություններ քարշող ուժի կամ ինվենտարի ավելորդ ունեն, նրանք պարտավոր են այդ ավելորդը տրամադրել չունեող տնտեսություններին, իհարկե, դրամով վճարելով տերերին այդ քարշող ուժով ու ինվենտարով կատարած աշխատանքների արժեքը կամ վարձը: Այդ վճարումը կատարելու համար կտոպերացիան իր վրա պարտավորություն վերցրեց վարկ տալ հողային համայնքին: Բացի այդ, կոռպերացիան պարտավորվեց բաց թողնել արտադրական հատուկ վարկ՝ բատրակներին ու չքավորներին պակասող քարշող ուժ և գյուղատնտեսական գործիքներ գնելու համար:

Յերբ այդ հողային համայնքի բոլոր բատրակային, չքավոր ու միջակ տնտեսությունների կոնտրակտացրած հողերի մշակման միջոցների հարցը հարթվեց, վերխովցիք, վորպեսզի հետո թյուրիմացություն չծագի, պայմանագրի մեջ մտցրին այսպիսի մի կետ:

«Վերխովսկոյի հողային համայնքը պարտավորվում ե իր ժամանակին կազմակերպել իր բատրակ՝ չքավոր անդամների հողի մշակումն, ցանքսը և բերքի հավաքումն՝ հաջողեցնելով, վոր բատրակ՝ չքավոր տնտեսությունները կոլեկտիվորեն ձեռք բերեն արտադրության միջոցներ, լծելու սարք և այլն, նույնպես պարտավորվում ե գրդել այդ աշխատանքները կատարելու համայնքի այն անդամներին, վորոնք ունեն

քարշող ուժի և ինվենտարի ավելցուկ՝ այս
պայմանով, վոր նրանք կոռպերացիայից
ստացվելիք թե ընդհանուր և թե հատուկ
միջոցներից ստանան բատրակային ու չքա-
վոր տնտեսությունների համար իրենց կա-
տարած աշխատանքների արժեքը»:

Վերխովցիք արգեն զիտեյին, վոր տեսակավոր
սերմի ցանքով շատ ձեռնտու յե, ուստի նրանք զի-
մեցին կոռպերացիային, խնդրեցին վոր նրանց տե-
սակավոր սերմացու տա. կոռպերացիան համաձայնեց,
բայց հետեւյալ պայմանը դրեց.

Առանձնացնել մի մեծ հողային տա-
րածություն և տեսակավոր սերմացույի
փոխարեն վերադարձնել սովորական հա-
սարակ սերմ՝ լրացուցիչ վճարելով ամեն
ցենտների համար 90 կոռպեկ:

Վորխովցիք այդ պայմաններին համաձայնեցին և
պայմանագրի մեջ համապատասխան կետ մտցրին,
վորով պարտավորվում եյն այդ բոլորը կատարել
ճշտությամբ:

Ապա վերխովցիք քննության առան, թե համայնքի
անդամներից ով ինչքան հացանատիկ պարտավոր ե-
տալ պետությանը բերքը հավաքելուց հետո Վորով-
հետեւ համայնքի անդամների մեջ կային բատրակներ,
չքավորներ ու միջակներ ընտանիքի անդամների տար-
բեր կազմով, տարբեր կարողությամբ, ու մեկը շատ
եր ծախս դրել, մյուսը քիչ, վճռեցին բոլոր անտե-
սությունները բաժանել մի քանի խմբերի. Վորմանք —
ավելի ունաուրները — պետք եւ վաճառեյին պետու-
թյանը ցանքսի իրենց մասի մի հեկտարին Յ ցենտնե-

րից վոչ պակաս. մյուսները — ավելի չքավորները —
մի հեկտարին 2 — 2½ ցենտներից վոչ պակաս. իսկ
յերբորդ խմբի — ամենաչքավոր և բազմանդամ ընտա-
նիքների մասին — վորոշեցին պարտագիր նորմաներ
չսահմանել. ինչքան կարող են, այնքան ել կտան: Միա-
ժամանակ իհարկե վորոշեցին, վոր ազատ շուկայում
վոչ մի գրամ չծախսեն, վորի համար նրանք փոխադար-
ձաբար մեկը մյուսին յերաշխավորում եյին: Ընդունած
վճիռը հիշելու համար դա մտցրին պայմանագրի մեջ:

Այս բոլորի հետ միասին, ընկերությունը, նա-
խատեսելով հացը մաս-մաս տեղ հասցնելու ու հան-
ձնելու պայմանները, վորոշեց՝ հացի առանձին
պարտիաները տեղ հասցնելու մասնակի
ժամկետները, որինակ, առաջին յերկու շաբաթը —
20 ցենտներ, յերկրորդում — 25 ցենտներ և այլն, մինչև
սահմանված յերեք ամիս ժամկետի վերջը: Սա անհրա-
ժեշտ եր անել հետեւյալ յերկու պատճառներով: Առա-
ջին, վորպեսզի շատ ժամանակ չկորցնեյին հերթի
կանգնելով հանձնելու համար և չբարդացնեյին հաշ-
վետեսությունը: Յերկրորդ, վորպեսզի ընդունելու
ժամանակ տեխնիկական դժվարություններ չստեղ-
ծվեյին և ընդունող կայանը չծանրաբեռնվեր:

* * *

Մինչև այժմ կոնտրակտացիան, բազմամյա կոնտ-
րակտացիայի մի փոքր մասից բացի, կատարվում եր
աշնանացանի համար առանձին, և գարնանացանի հա-
մար առանձին: Սա բարդացնում ու դժվարացնում եր
կոռպերացիայի գործը. նա մի ցանքսի պայմանագրը
գեռ չվերջացրած ստիպված եր սկսել մյուս ցանքսին
վերաբերող պայմանագրը: Միևնույն ժամանակ, իրենց

ցանքսերը կոնտրակտացնող գյուղացիական անտեսությունները հնարավորություն չունեցին ցանքսաշըրջանի կանոնավոր պլան մշակելու թեկուղ մեկ տարվա համար։ Այնինչ աշնանը կատարվող դաշտային աշխատանքները սերտ կապված են գարնանացանի հետ, իսկ գարնանային դաշտային աշխատանքները սերտ կապված են աշնանացանի հետ։ Աշնանը պետք է հերկանել ձյունի տակ թողնելու համար և պատրաստել գարնան սերմացուն, իսկ գարնանը պետք է հողը շուռ տալ, վաղաժամ ցել պատրաստել աշնանացանի համար և պատրաստել աշնան սերմացուն։ Ուստի կառավարությունը վորոշեց աշնանացանի և գարնանացանի կոնտրակտացիաները միացնել մեկ պայմանագրի մեջ։

ԿՈՆՏՐԱԿՏԱՑՐԱԾ ՑԱՆՔՄԵՐԸ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑԱՆՔՄԵՐԸ

Բերքայնության բարձրացումն կախված է յերկրագործության կուլտուրական ձևերից, կանոնավոր ցանքսաշըրջանից, նաև մանր տնտեսությունների միացումից։ Պետական և կոռպերատիվ կազմակերպությունները ցանքսերը կոնտրակտացնելիս ոգնում են գյուղացիական տնտեսություններին՝ բերքայնության բարձրացման այս պահանջները բավարելուն կատարելու։ Բայց ցանքսերը կոնտրակտացնելու համար գյուղացիական տնտեսությունները պետք է միանան կազմեն խմբակներ կամ ցանողների ընկերություններ իրենց հողամասերը միացնելու և կոլեկտիվորեն մշակելու համար։

Բայց պատահում ե, վոր բարբակները, չքավորներն ու միջակները կկամմենային ցանքսերի մասին կոնտրակտ կապել, սակայն վախենում են կոլեկտիվ

կազմելուց։ Զեն հավատում այն ոգուտներին, վոր կարող ե նրանց տալ կոլեկտիվ ցանքսերի կոնտրակտացիան

Որինակներով ցույց տանք միացյալ կոլեկտիվ տնտեսությունների կոնտրակտացիայի ոգուտները։

Հայտնի յե, վոր 1928 թվի բերքը տարբեր եր Խորհրդային Միության առանձին ռայոններում։ Որինակ, հյուսիս-արևելյան շրջանում բարձր բերք կար, կենտրոնական-սևահող շրջանում — միջակ եր, Հյուսիսային կոլկասում — միջակից ցածր եր։ Վերցնենք այս յերեք ռայոնները և տեսնենք ինչպես եր բերքը նրանց կոլեկտիվ դաշտերում և ինչպես եր անհատական գյուղացիական տնտեսությունների դաշտերում։

Յեվ ահա մենք տեսնում ենք, վոր հյուսիս-արևելյան շրջանում գյուղացիական անհատական տնտեսությունները միջին թվով բերք եյին ստացել ամեն մեկը մի տոննա (61 փութ 2 փունտ), իսկ կոլխոզներում մեկ տանը բերք ընկավ $1\frac{1}{3}$ տոննա, այսինքն 33 տոկոսով ավելի։

Կենտրոնական-սևահող շրջանում ամեն մի անհատական տնտեսությունը միջին թվով բերք եր ստացել մի տոննայից պակաս, իսկ կոլխոզներում մեկ տանը բերք ընկավ $1\frac{1}{5}$ տոննա — 20 տոկոսով ավելի։

Հյուսիսային կոլկասում ամեն մի անհատական տնտեսությունը միջին թվով բերք եր ստացել կես տոննա, իսկ կոլխոզներում մի տանը հասավ 16 տոկոսով ավել, քան անհատական տնտեսություններում։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոչ միայն հյուսիս-արևելյան շրջանում, ուր յեղանակը նպաստավոր եր բերքին, կամ կենտրոնական-սևահող շրջանում,

ուր յեղանակը նույնպես կարելի յե առել նպաստավոր եր, կոլխոզների բերքը գյուղացիական անհատական տնտեսությունների բերքից բարձր յեղավ, նույնիսկ չյուսիսային կովասում, ուր բերքը պակաս եր, այստեղ ել բերքը կոլխոզներում ավելի ստացվեց քան անհատական տնտեսություններում:

Բայց կոլխոզների բերքը գյուղացիական տնտեսությունների բերքին գերազանցեց վոչ միայն քանակությամբ, — կոլխոզների բերքը վորակով ել բարձր եր: Վեցնենք, որինակ, Ստորին-Վոլգայի յերկրամասի մի քանի իրար կից շրջանների 1928 թվի գարնանացան ցորենի բերքը կոլխոզներում և անհատական տնտեսություններում:

Բալաշովի ոկրուգի գյուղացիական անհատական տնտեսությունների ամենալավ տեսակները բնորոշվում եյին հետեւյալ նշաններով՝ մեկ լիտրի քաշը 738 գրամ, զիքիլ ունեյին յերեք տոկոս, փոշեսունկից վնասված՝ 0,04 տոկոս. իսկ Բալաշովի ոկրուգի կոլխոզների նույն այդ գարնանացան ցորենի բերքի միջակ տեսակները բնորոշվում եյին՝ մեկ լիտրի քաշը 754 գրամ, զիքիլ միայն $1\frac{1}{2}$ տոկոս, և փոշեսունկից վնասվածություն միայն 0,01 տոկոս:

Մերձգոլգյան գերմանացոց շրջանի գյուղացիական անհատական տնտեսությունների ցորենի մի քանի տասնյակ նմուշներ բնորոշվում եյին՝ մեկ լիտրի քաշը 749 գրամ, զիքիլ կես տոկոս, այնինչ այս շրջանի կոլխոզների ցորենի նմուշները բնորոշվում եյին՝ լիտրի քաշը 765 գրամ, զիքիլ միայն յերեք քառորդ տոկոս:

Պուգաչովսկի ոկրուգի անհատական տնտեսությունների միջակ նմուշները բնորոշվում են հետեւյալ կերպ՝

լիտրի քաշը 727 և կես գրամ, զիքիլ յերկուսուկես տոռկոս, փոշեսունկից վնասվածություն 0,08 տոկոս, այնինչ կոլխոզների ցորենի բնորոշումն եր՝ 752 գրամ, զիքիլ մեկ տոկոս, իսկ փոշեսունկից վնասվածություն ամենափոքր չկար:

Հասկանալի յե, վոր կոլխոզների այս արդյունքները ձեռք են բերված կանոնավոր ցանքսաշրջանի, հողը կուլտուրական յեղանակով մշակելու և ազգութեանիկական բարելավումներ կիրառելու շնորհիվ:

Իսկ գյուղացիական միջակ ու չքավոր անհատական տնտեսություններում ցանքսերը կոնտրակտացիայի յենթարկել և բարդ ազրոտեխնիկական բարելավումներ կիրառել հնարավոր ե միայն ժամանակ, յերբ անհատական տնտեսությունները կմիացվեն մի խմբակի կամ ընկերության՝ կոլեկտիվ ցանքսի համար:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՈԳՈՒՏՆԵՐԸ

Մենք տեսնում ենք, վոր ցանքսերի կոնտրակտացիան ձեռնտու յե բարակային, չքավոր և միջակ տնտեսություններին:

Առաջին, վոր կոնտրակտացնող կազմակերպություններից փողով, սերմով, պարարտանյութերով և գյուղատնտ. ինվենտարով վարկ ստանալով, գյուղացիական սակավագոր տնտեսությունը առանց կուլակի ոգնության գիմելու կարող ե մշակել իր ամբողջ հողը և լիովին ոգտվել իր բերքից:

Յերկրորդ. մանելով ցանողների խմբակը կամ ընկերության մեջ, այսինքնիր հողամասը միացնելով մյուս տնտեսություններին կից հողամասերին և նրանց հետ միասին մշակելով, գյուղացիական սակավագոր տնտե-

սությունը կոնտրակտացնող կազմակերպություններից կարող ե ստանալ ժամանակավորապես ոգտվելու համար գյուղատնտ. բարդ մեքենաներ, նաև տեսակավոր սերմացու, վորը բարձր բերք ե տալիս:

Սակայն չքավոր ու միջակ տնտեսությունների կորտրակտացիայից ստացած ոգուաները սրանով չեն սահմանափակվում: Վերցնենք թեկուզ այն հարցը, թե կոնտրակտացրած ցանքսերի ռերքի մի մասը ինչ գնով պիտի հանձնվի կոնտրակտացնող կազմակերպություններին:

Բերենք մի որինակ. գյուղում ապրում են յերկու գյուղացի. մեկն իր հողամասում գարնանացան և կատարում անհատականորեն, իսկ մյուսը մտել և ցանողների միավորության մեջ և գարնանացանը կատարում ե մյուսների հետ միասին: Մըանք յերկուսն ել բերքը կհավաքեն. կհաշվեն, թե ինչքան պետք ե պահեն իրենց տնտեսության համար: Կվորոշեն ավելցուկը և կտանեն ծախելու կոռպերացիայի կամ հացմիության պահեստներին: Յենթաղբենք թե յերկուսն ել կրերեն միևնույն պահեստը մի~մի տոննա ցորեն, Նրանց բերած ցորենը կչափեն լիտրով, կկշռեն կշռով ու հաշվիլ կտեսնեն: Այստեղ արդեն մենք կտեսնենք տարբերությունը: Անհատական գյուղացու ցորենը, վոր ցանքած ե յեղել առանց ազրոտեխնիկ բարելավումներ կիրառելու, հավանական ե, վոր սերմացուն ել զտած չի յեղել, մի լիտրը կկշռի, ասենք, 727,5 գրամ, և նա՝ տվյալ պունկտում գոյություն ունեցող հասարակ ցորենի մեկ տոննայի համար պետական գնով կստանա 73 ո. 20 կ.: Սա այն դեպքում, յեթե նրա ցորենը ունենա նորմալ խառնուրդ, փոշեսունկից

(թողից) ու ժանդից վնասված չլինի և նրա բնորոշման չափը լինի այդ ուայոնի համար սահմանած բազիսից վոչ պակաս: Իսկ յեթե նրա ցորենը շատ զիբուլություն լինի, և այլն, այդ դեպքում նրա գնից՝ 73 ո. 20 կողեկից ռեֆակցիա (գեղջ) կարվի:

Հիմա տեսնենք ինչքան կստանա կոնտրակտանտցանողը իր մեկ տոննա ցորենի համար, վոր բերել ե հանձնելու կոնտրակտացիայի հաշվին: Ինչ վերաբերում ե ցորենի բնույթին, զիբուլության և վորակի մյուս նշաններին, ինչպես տեսանք որինակներից, կոնտրակտանտցանողի ցորենի բնույթն ել բարձր կլինի, զիբիլն ել պակաս կլինի, քան անհատական գյուղացու ցորենինը: Յենթաղբենք, վոր բնույթը բարձր ե 16,5 գրամով, այսինքն 744 գրամ ե, իսկ զիբուլությունը պակաս ե մեկ տոկոսով: 16,5 գրամ բարձր բնույթի և մեկ տոկոսով պակաս զիբուլության համար կոնտրակտանտցանողն իսկույն և յեթ զնի հավելումն (բոնիֆիկացիա) ե ստանում՝ մեկ տոննային 2 ո. 44 կ., այսինքն 73 ո. 20 կողեկի փոխարեն կոնտրակտանտցանողը մեկ տոննայի համար կստանա 75 ո. 64 կ.: Դրանից բացի կոնտրակտանտցանողը մի առավելություն ել ունի. կոնտրակտացիայի պայմանագրով նա իր ավելցուկը պիտի հանձնի 3 ամսվա ընթացքում՝ հաշված բերքի հավաքելու սկզբի որից: Իսկ յեթե նա այդ ժամկետից շուտ ե հանձնում, լրացուցիչ վճար ե ստանում մի տոննայի համար 1 ո. 83 կ.: Այդպիսով կոնտրակտանտցանողը 73 ո. 20 կողեկի փոխարեն մի տոննայի համար կստանա 77 ո. 47 կ., վոր անհատականորեն ցանողի ստացածից ավել ե 4 ո. 27 կողեկով:

Թեև մեր հացամթերման գները կայուն են, այսինքն անփոփոխ են հացամթերման ամբողջ ընթացքում, սակայն հնարավոր ե, վոր առանձին ամիսներում հացամթերման գները սահմանած գնից բարձր կամ ցածր լինեն ցենտներին միքանի կոպեկ: Այսինկատի առնելով ցանողներից միքանիսը չեն ուզում կոնտրակտ կնքել, վախենալով թե կարող են գնի մեջ վնասվել, յեթե առաջուց պարտավորություն հանձն առնեն իրենց ապագա բերքի մի մասը վաճառելու պետությանը:

Այս վախը փարատելու և կոնտրակտանտ-ցանողների համար ամենաբարձր և ամենաձեռնություն գները իրապես ապահովելու համար տիպային պայմանադրում նախատեսած ե մի պունկտ:

«Ընկերության (հողային համայնքի) կողմից ըստ այս պայմանագրի հանձնած հացահատիկի համար հացկոռպը պարտավորվում է վճարել նրան»

ա) հացահատիկի հանձնելու որվա հացամթերման կոնվենցիոն (պայմանագրային) գինը, վորը սակայն, պայմանագիրն ստորագրելու որվա գնից պակաս չպիտի լինի, բայց այդ գինը կարող ե ունենալ վորակի համար սահմանած հավելում կամ զեղչ:

բ) տեսակավոր հացահատիկ հանձնելու դեպքում, յեթե մաքրությունն ել որինակելի յե, այսինքն տիպիկության կողմից 90 տոկոսից կամ III կատեգորիայից ցածր չե — հացկոռպը վճարում ե հանձնողին տե-

սակավորության համար հավելումն ԽՍՀՄ Առևտրի ֆողկոմատի սահմանած չափով:
Բացարենք այս կետն որինակով:

Դիցուք, պայմանագիրն ստորագրելու որը կոնվենցիոն գինը, այսինքն այն գինը, վոր վճարում են պետական և կոռպերատիվ հացամթերողները, Շ. ո. 50 կ. Ե՝ ցորենի մեկ ցենտները: Իսկ այն ժամանակ, յերբ սկսվում ե նոր բերքի հացի հանձնություն, յենթադրենք, ցորենի մեկ ցենտների կոնվենցիոն գինը Շ. ո. 20 կ. Ե: Այս դեպքում այն գյուղացիք, վորոնք առանց կոնտրակտացիայի են հանձնում ցորենը, կստանան այդ որը գոյություն ունեցող գնով, այսինքն մեկ ցենտներին Շ. ո. 20 կ., այնինչ կոնտրակտանտ-ցանողները իրենց ցորենի համար կստանան այն գինը, վոր գոյություն ուներ պայմանագիրն ստորագրելու որը, այսինքն մեկ ցենտներին Շ. ո. 50 կ.:

Իսկ յեթե պայմանագիրն ստորագրելու որը ցորենի ցենտների գինը Շ. ո. 20 կ. Եր, իսկ հացը հանձնելու որը բարձրացել ե մինչև՝ մեկ ցենտներն, ասենք, Շ. ո. 50 կոպեկի, այս դեպքում կոնտրակտանտ-ցանողները կստանան վոչ թե այն գինը, վոր գոյություն ուներ պայմանագիրն ստորագրելու որը, այլ այն գինը, վոր գոյություն ունի հիմա, այսինքն Շ. ո. 50 կ.:

Այսպիսով տեսնում ենք, վոր կոնտրակտացիան ապահովում ե ամենաբարձր գինը:

Պայմանագրի՝ տեսակավորությանը վերաբերող բաժնից յերեսում ե, վոր կոնտրակտանտ-ցանողներին, վորոնք տեսակավոր ցանքսեր են կատարում, վերեսում ցույց տված ողուտից բացի, մի ուրիշ արտոնություն ել ե տրվում. այն Ե՝ հացահատիկի հիմնական գնին

մի առանձին հավելում՝ և տրվում — ցոր ենի մեկ ցենտ-ների համար 60 կոպ., իսկ զարու մեկ ցենտների հա-մար 30 կոպ.։

Հաշվի առնենք նաև այն, վոր միավորյալ տնտե-սությունները ավելի բարձր բերք են ունենում։ Յեթե տվյալ ուսյուում անհատական տնտեսության ցորենի բերքը լինի հինգվեցերորդական տոննա, իսկ ցանող-ների խմբակինը մեկ տոննա, ապա՝ մեկ տոննայի հա-մար վերեւում ցույց տված 7 ռ. 32 կ. ընդհանուր հավե-լումից բացի, կոնտրակտանոցանողները անհատակա-նորեն ցանողների հետ համեմատած, իրենց ցանած ամեն մի հեկտարից կտանան լրացուցիչ ^{1/6} տոննա, կամ 13 ռ. 42 կ., վորը անհատական տնտեսությունը ինարկե չի ստանա։

Արևածաղիկը կոնտրակտացիայի յենթարկելու դեպ-քում, կոլխոզներին պետական գներով պետք ե բաց թողնվի հանձնած ամեն մի ցենտներ արևածաղիկի սերմի համար 3 կիլո արևածաղիկի յուղ։ Իսկ յեթե կոլ-խոզը անտառների կոնտրակտացման պայմանագիր ել կնքած լինի, այս դեպքում յուղից բացի, կոլխոզը դարձյալ պետական գներով կտանած հանձնած ամեն մի ցենտներ արևածաղիկի սերմի համար 3 կիլո քուսպ։

ՀԱՅԻ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՈՒՄՆ

Մեզ պետք են տրակտորներ և գյուղատնտ, այլ բարդ գործիքներ ու մեքենաներ, նույնպես և ար-դյունաբերական ապրանքներ։ Բայց մենք մեր յեր-կրում այդ բոլորը դեռ բավարար չափով չենք ար-տադրում, վոր կարողանայինք բավարարել մեր ամ-բողջ պահանջը։ Ուստի ստիպված ենք պակասորդ

մեքենաները բերել տալ արտասահմանից։ Բայց մեր ներմուծման (իմպորտի) չափերն ամբողջովին կախ-ված են արտածման (եկապորտի) չափերից, նրանից, թե վորքան ենք արտահանել ու ծախել արտասահ-մանում գյուղատնտ, և այլ մթերքներ, վորոնցից մեր յերկիրը ավելցուկ ունի։ Սակայն մյուս կողմից, ներ-մուծման հաջողությունն ու ոգտավետությունը կախ-ված չե միայն՝ ԽՍՀՄ-ից արտասահման արտածվող նյութերի քանակությունից, չաջողությունը կախված ե մեր արտածման ժամկետներից և արտահանվող մթերքների հատկությունից։

Մեզ մոտ, ԽՍՀՄ մեջ, գյուղատնտն ունեն հացա-մթերման պետական կայուն գներ, վորոնք հացա-մթերումների գրեթե ամբողջ ընթացքում մնում են նույնը՝ առանց բարձրանալու կամ իջնելու, վորպեսզի կուլակներն ավելի չոգտվին, քան չքավորներն ու մի-ջակները։ Իսկ արտասահմանում, բուրժուական յեր-կրներում հացի գները հաստատուն և միատեսակ չեն։ Նրանց բիրժաներում հացի գները վեր ու վար են թռչկոտում։ Այստեղ զինը կախում ունի ժամկետից և այն հանգամանքից, թե տարբեր յերկրներ ինչ չա-փով են հաց առաջարկում։

Մեզ համար, մեր հացի ավելցուկը արտասահմա-նում ծախելու ամենաձեռնտու ժամանակը մեր հա-ցամթերման առաջին ամիսներն են։ Այդ ժամանակ Ամերիկան ու Կանադան, վորոնց բերքը շատ ավելի ուշ ե հասնում, քան ԽՍՀՄ-յան բերքը, գեռևս հանգես յեկած չեն լինում վորպես հաց վաճառողներ։ Ուստի այդ միջոցին արտասահմանում մենք կարող ենք ավելի ձեռնտու գներով ծախել հացը, և ձեռնտու պայման-

Ներով և ավելի հաջող գնել ու ներմուծել մեր յերկիրը
մեզ անհրաժեշտ գյուղատնտեսական մեջնաներ:

Հետեաբար կոնտրակտանտ-ցանողների պարտավո-
րությունը — բերքահավաքի սկզբից հաշված առաջին
3 ամսվա ընթացքում հացը կոնտրակտացնող կազմա-
կերպություններին հանձնելը — ոգտակար և ամբողջ
յերկրին, և առաջին հերթին՝ գյուղի բատրակային,
չքավոր ու միջակ տնտեսություններին:

Նմանապես այն պահանջը, վոր արվում և կոն-
տրակտանտ-ցանողներին՝ ցանվող արտերում ազրո-
նոմիական բարելավումներ կատարելու մասին, բացի
ըսնիֆիկացիայից (պրեմիայից), վոր ստանում են
կոնտրակտանտ-ցանողները, շահավետ և նաև նրանով,
վոր ԽՍՀՄ բարձր վորակի հացը արտասահմանում
ծախվելիս նույնպես ստանում և ըսնիֆիկացիա, այս-
ինքն ավելի ձեռնտու գին:

Մեր յերկրում — մենք ունինք հսկայական ալյու-
րադաց տնտեսություն, ահազին քանակությամբ ճիթ-
հաններ և այլ ֆաբրիկներ ու գործարաններ, վո-
րոնք մշակույթի յեն յենթարկում գյուղատնտ.
հումույթը: Գյուղատնտ. հումույթից վերամշակվող
մթերքներից մեծ մասը դարձյալ գյուղացիությունն և
սպառում:

Իսկ վորպեսզի չքավորներն ու միջակները ժամա-
նակին բավարար քանակությամբ ու եժան զներով
ստանան այդ ապրանքները, անհրաժեշտ և վերամշա-
կող ֆաբրիկներն ու զավողները ժամանակին և լուսին
ապահովել գյուղատնտեսական հումույթով: Հումույթի
ստացման մեջ տեղի ունեցող ընդմիջումները թան-
կացնում են ապրանքների արժեքը, և դրանից առաջին

հերթին տուժում ե այդ ապրանքների գլխավոր սպա-
ռողը — գյուղացին:

Բացի դրանից, մենք գիտենք, վոր քաղաքների
հացահայթայթման ընդմիջումներից ոգտվում են մաս-
նակոր հացավաճառները, սպեկուլյանտները: Սրանք
ոգտվում են հացի պակասությունից, բարձրացնում
են հացի գները, սրանից ել բարձրանում են մյուս
ապրանքների գները, և կյանքը թանկանում է:

Մենք տեսնում ենք, ինչպես սերտ հյուսված են
քաղաքի և գյուղի շահերը, և թե ինչպես՝ ամբողջ յերկրի
տնտեսության համար կարևոր ու անհրաժեշտ է, վոր
գյուղացիական տնտեսությունների հացի ավելցուկ-
ները պետական և կոոպերատիվ կազմակերպություն-
ները կարողանան ժամանակին և լիովին վաճառել:

Հիմա միանգամայն պարզ ու հասկանալի յե, թե
ինչու պետությունը կոնտրակտացնող կազմակերպու-
թյունների միջոցով կոնտրակտանտ-ցանողներից պա-
հանջում ե՝ իրենց հացի ապրանքային ավելցուկները
հանձնել հացամթերման առաջին ամիսներին: Այս պա-
հանջի կատարումն կոնտրակտանտ-ցանողներին նույն-
պես ձեռնտու յե:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ Ե ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՑԱՆՔՄԵՐԸ

Բացի այն ոգուտներից, վոր ստանում են միջակ
ու չքավոր տնտեսությունները իրենց ցանքսերը կոն-
տրակտացնելուց, կոնտրակտացիան ոգնում ե, վոր
ցանվեն հատկապես այն կուլտուրաները, վորոնք
տվյալ ռայոններում ձեռնտու և ոգտակար են:

Որինակ, 1924 թ. յերաշտից Ուկրայինայի տափաս-
տանային մասում, ինչպես հայտնի յե, խիստ մեծ

անբերբիություն յեղավ։ Պահանջվում էր, վոր պետությունը անբերբիությունից տուժած գյուղացիական տնտեսություններին ոգնության գա սերմացուով։ Ուկրայինայի կառավարությունը, տուժած գյուղացիներին սերմացուով ոգնելիս վորոշեց տուժած գյուղացիական տնտեսություններին տալ յերաշտի դիմացող կուլտուրաների սերմեր, վորպեսզի չկըկնվի անբերբիությունը, յեթե նորից յերաշտ լինի։

Միևնույն ժամանակ հաշվի առնվեց, վոր յերաշտից տուժած ույոնը գտնվում է ծովային քաղաքներին մոտ, վորոնցից կատարվում է արտածումն զեպի արտասահման։ Նույնպես հաշվի առնվեց այն, վոր արտասահմանում գոյություն ունի յեզիպտացորենի պահանջ, վոր մեզ միշտ ձեռնտու յե։ Այս պատճառով անբերբիությունից տուժած գյուղացիական տնտեսություններին ցանելու համար կոնտրակտացիայի կարգով տրվեցին յեզիպտացորենի սերմեր։ Յեվ ահա թե ինչ արդյունք ստացվեց դրանից։ Սերմացուի փոխառություն բաժանելու ժամանակ Ուկրայինայում յեզիպտացորեն ցանվող տարածություն 872 հազար հեկտար եր. իսկ բաժանած փոխառության շնորհիվ հետեւյալ տարի յեզիպտացորեն ցանված տարածությունը դարձավ 1,300 հազար հեկտար։ 1924 թ. յեզիպտացորենի միջին բերքայնությունն եր հեկտարից մեկ տոննա, իսկ կոնտրակտացիայից հետո 1925 թ. ագրոտեխնիկական բարելավումների շնորհիվ, դարձավ հեկտարից $1\frac{1}{3}$ տոննա։

Ինչպես հայտնի յե, մեր տեկստիլ (մանուֆակտուրա արտադրող) արդյունաբերությանը բամբակ և պետք, վորը առաջ մուծվում եր մեր յերկիրն արտա-

սահմանից։ Այնինչ ԽՍՀՄ յերկու մասերում — Միջին Ասիայում և Անդրկովկասում — բամբակ համառ է։

Յեվ ահա մեր այս յերկու շրջաններում, վորոնք կարող ելին լիտին ապահովել մեր տեկստիլ արդյունաբերությունը հումույթով, դեռ 1913 թվին բամբակ եր ցանվում, միայն մոտ 219,000 հեկտար։ մնացած ահազին դաշտերը, վոր ընդունակ ելին բամբակ ցանվելու համար, ցորենով ելին ցանվում, մի շարք հողեր բոլորովին մնում ելին խոպան։

Առաջին կոնտրակտացիան անցկացնելուց հետո, 1924—25 թ. բամբակ ելին ցանել արդեն 500 հազար հեկտար։ Հետեւյալ 1925—26 թվին բամբակ ցանած եր 660 հազար հեկտար։ Հետեւյալ 1926—27 թ. բամբակի ցանքսերը աճեցին մինչև 710 հազար հեկտար։ 1927—28 թ. բամբակի ցանքսը աճեց մինչև 860 հազար հեկտար, վերջապես 1928—29 թ. աճեց մինչև 1 միլիոն 90 հազար հեկտար։

Նմանապես, Ուկրայինայում ել, Միջին Ասիայում ել, Անդրկովկասում ել կոնտրակտացիան ոգնել ընդարձակել ցանքսերը հատկապես այն կուլտուրաների, վորոնք ձեռնտու յեն թե այդ յերկրամասերին և թե ամբողջ յերկրին։

Դեռ շատ չի անցել այն ժամանակից, յերբ մեր վուշի գործարանների ույոններում փոխանակ վուշ, կանեփ ցանելու, ցանում ելին հաճար, վարսակ և այլ հացահատիկներ։

Նույնպես ել շաքար արդյունաբերող ույոններում ճակնդեղի ցանքսի փոխարեն գյուղացիների դաշտերը ցանվում ելին ինչ տեսակ կուլտուրայով վոր ասեք։ Այստեղ ել միայն կոռպերացիայի անցկացրած կոն-

տրակտացիայի միջոցով եր, վոր հաջողվեց անցկացնել վուշի, կանեփի նույնպես և ճակնդեղի մասսայական և հսկայական տարածությամբ ցանքսեր, վորոնք ապահովում են այդ ֆարբիկների ու զավոդների հումութի գրեթե ամբողջ պահանջը:

Կամ վերցնենք, որինակ, յերկրի, մասնավորապես Ուկրայինայի, անտառատափաստանային մասերը: Զնայած տեղական հողի բացառիկ արգավանդության, գյուղացիք այստեղ մուրացկանի պես եյին ապրում, վորովնետև հողից անկանոն եյին ոգտավում՝ ցանում եյին մի շերտ հաճար, մի շերտ վարսակ և մի շերտ գրեշիխա: Անտառատափաստանի սակավահողության պատճառով, այս շերտերից ստացվող բերքն ել հաղիվ եր բավարարում տնտեսության սեփական կարիքները. շատերը ստիպված եյին գեռ մի մասն ել գնել: Այսինչ կանոնավոր ցանքսաշրջանի գեպքում այս տնտեսությունները զուտ-սպառողականից կարող եյին դառնալ ապրանքային, այսինքն այնպիսի տնտեսություններ, վորոնք ավելցուկ ունին վաճառելու համար:

Այս ուայոնի մեքենատրակտորային կայանը մի քանի գյուղերի հետ կոնտրակտացման պայման եր կնքել և այդ ուայոնի հողաշինարարությունը անցկացնելիս ցանքսաշրջանի և եջ մտցրեց տեխնիկական և լոբիատեսակ կուլտուրաները՝ բոլորովին դուրս մղելով հաճարը: Դյուղացիների սեփական կարիքները բավարարելու համար մեքենա-տրակտորային կայանը մյուս ուայոններից եր հաճախ բերել տալիս այս կոնտրակտացրած գյուղերը: Միևնույն ժամանակ գյուղացիք իրենց հերթին մեքենա-տրակտորային կայանին եյին հանձնում տեխնիկական ու լոբիատեսակ կուլտուրաների ամբողջ

բերքը: Յերբ գյուղացիական միացյալ անտեսությունները առաջին բերքից հետո հաշվեցին արդյունքները, դուրս յեկավ, վոր ցանքսի ամեն մի հեկտարին մաքուր յեկամուտ եր ստացվում 65 ուռելուց ավելի, քուր մինչև կոնտրակտացիան չքավոր ու միջակ այն ինչ մինչև կոնտրակտացիան չքավոր ու միջակ անտեսությունները պարագի ձեռքին չեյին կարողանում աչք բանալ:

Յերկրի համար արժեքավոր և շատ հարկավոր դաշտային կուլտուրաները — բըինձը, լոբիատեսակները (լոբին, սիսեռը, վոսպը, սոյան) — մեզ մոտ գրեթե չեն արտադրվում, չնայած վոր ԽՍՀՄ-յան ուայոնների մեծամասնության հողի և յեղանակի պայմանները թույլ են տալիս զարգացնել այս կուլտուրաների ցանքսերը: Պապերից ժառանգած սովորութները, ավյալ ուայոնի համար նոր կուլտուրաների սերմեր ստանալու դժվարությունները, վախը հետեանքի համար — թույլ չեյին տալիս առանձին, նույնիսկ առաջավոր տնտեսություններին ձևափոխության յենթարկել իրենց ցանքսաշրջանը, քանի գեռ չեր սկսվել ցանքսերի կոնտրակտացիան: Իսկ այժմ գյուղական այն դաշտերում, ուր անհիշատակ ժամանակներից սկսած ցանքում եյին միայն հանրածանոթ կուլտուրաներ, — կարելի յետեսնել հողային հսկայական մասսիվներ, վորոնք ցանքած են միայն լոբիատեսակ, կամ սոյայով, կամ բընձով, բամբակով և այլն: Այս բոլորը մենք այժմ ունինք՝ ցանքսերի կոնտրակտացիայի շնորհիվ:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԵՐԻ ՅԵՆԹԱՐԿԵԼ ԲՈԼՈՐ ԲԱՏՐԱԿՆԵՐԻ,
ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՄԻՋԱԿՆԵՐԻ ՑԱՆՔՍԵՐԸ

Շատ ուայոններում, ուր բատրակների, չքավորների ու միջակների տնտեսությունները իրենց ցանքսերի

կոնտրակտացման պայմանագիր ելին կնքել, տեղական գյուղատնտ. վարկային ընկերությունների կամ տեղական գյուղական ակտիվի անգործնեյության շնորհիվ կոնտրակտացիան թույլ եր անցնում: Սակավազոր, չքավոր տնտեսությունները իրենց անհրաժեշտ ոգությունը չելին ստանում և նշած հողի տարածությունը լիովին չեր ցանվում: Որինակ վերին Պալտավկայի գյուղացիք հաղորդում են՝

«Միայն ապրիլի 12-ից՝ վարկ տվող հիմնարկությունը (կրեդիտկա) առանց շտապելու սկսեց որգանիզմին և բացատրողական աշխատանք և կնքեց առաջին պայմանագիրը՝ 1929 թվի գարնանացանքը կոնտրակտացիայի յենթարկելու մասին: Կոնտրակտացիան անցկացնելու համար լիազորված եր տեղական կուսրիթիք քարտուղարը: Բայց բջիջը կոնտրակտացիային հարկավոր չափով ուշադրություն չդարձրեց, չոգնեց բացատրական աշխատանքը ծավալելուն: Պահնը կատարվեց միայն 50 տոկոսով. կոլեկտիվ մասսայական կոնտրակտացիան մոռացված եւ վարկ տվող հիմնարկությունը չմասնակցեց վոչ իր ռայոնի սերմացուի հաշվառման, վոչ ել տեղական սերմֆոնդի կազմակերպման:

Նկատված են նաև այսպիսի գեղքեր, յերբ կոռպալերացիան կոնտրակտացիայի ամբողջ աշխատանքը վերցրել ե իր ուսերի վրա: Տեղական կուսակցական կազմակերպությունները կանգնած են յեղել այս գործից մի կողմէ: Գյուղի չքավոր-միջակ մասի ակտիվությունը ծավալված չի յեղել կոնտրակտացիայի շուրջը: Գյուղիսորհուրդները մատնված են յեղել անգործության. վոչ միայն վոչ մի մասնակցություն

չեն ունեցել պայմանագիր կնքելում, այլև չեն հետեւ իրենց վրա վերցրած պարտավորությունների կատարելուն, մասնավորապես ազրոմինիմումը անցկացնելու գործում: Կոնտրակտացիայի արտադրական կողմը նսեմանում եր, և կնքվող պայմանագրերը դառնում ելին մի պայմանագիր, վոր վոչնչով չեր տարբերվում սովորական առ ու ծախսի գործարքից:

Դեպքեր են յեղել, յերբ կոռպալերացիան կոնտրակտանողներին կոնտրակտացիայով նախատեսած ազրոմինիմական ու տեխնիկական աջակցությունը ցույց չի տվել: Ն ման դեպքերում ազրոմինիմումի գյուղացիական դաշտերում կատարված գյուղացիայինն եւ Բայց չլինելու մեղքը կոռպալերացիայինն եւ Բայց պատահել եւ այնպես, վոր ցանողները բավարար չափով աջակցություն ստացել են, բայց ազրոմինիմումը, չնայած դրան, չեն կատարել: Հետևանքը յեղել ե այն, վոր ազրոմինիմումումը — ցանքսերի բերքայնությունը բարձրացնելու այդ կարող զենքը — մնացել ե վորպես վոչ մի նշանակություն չունեցող թղթի կտոր:

Որինակ, Միբիրում, կենտրոնական-սեահող շրջանում և կազմակստանում նկատված են դեպքեր, յերբ ցանքսերը կոնտրակտացված են յեղել, կնքած պայմանագրերով ավանսուներ են տված յեղել այնպիսի անձանց, վորոնք վոչ մի առնչություն չունեն գյուղատնտեսության հետ, այսինքն վորոնք ցանքս չեն ունեցել և պարզապես հանդիսացել են սպեկուլյանաներ: Առանձին տեղերում միենույն հողամասը 3—4 անգամ կոնտրակտացիայի յերնթարկված յեղել: Սա առաջացել ե մա-

սամբ կոնտրակտացնող որդանիզացիաների անկազմակերպությունից, մասամբ ել կոնտրակտանտցանողների աշկարա անբարեխղճությունից:

Կենտրոնական-սևահող շրջանի Ստարո-Ռուկուլսկումի գյուղում վարկային ընկերության մոտ հավաքված են յեղել իրենց աշնանային ցանքսերը 1928 թվին կոնտրակտացրած տեղական գյուղացիք, վորպեսզի ստանան կոնտրակտացիոն գրքույկներ և ավանաներ: Գյուղով անցնելիս են յեղել հարեան ռայոնի յերկու գյուղացիներ.

— Ի՞նչ գործով եք հաքաքված. սերմացնւ յեն բաժանում.

— Վոչ, սերմացու չի, կոնտրակտացման գրքույկներ ենք ստանում, իսկ ով չքավոր ե, նա, կնշանակի, մեկ հեկտարին 7 ռուբլի ել ավանս ե ստանում:

— Իսկ յես կարծեցի—սերմացու յե: Ի՞նչ կասես, Պետրո, մենք ել չկանգնենք, մեր բաժինն ստանանք:

— Ի՞նչ կլինի, կանգնենք, շտապելու բան չկա, յերեկոյան դեմ կհասնենք:

Հերթը հասավ սրանց.

— Ազգանուն, անուն, հայրանունդ:

— Յեփստիգնեե, Պյոտր Պետրովիչ:

— Ի՞նչքո՞ն ես ցանում:

— Յերեք ու կես հեկտար հաճար:

— Վար խմբիցն ես:

— Զքավոր, ուժապակաս, կնշանակի կարիքավոր:

Յեվ գյուրահավատ վարկային ընկերությունը տվեց նրան գրքույկ և դրամ՝ 24 ռ. 50 կոպ.: Նույնը կրկնվեց և նրա ընկերոջ հետ:

Յերբ սկսվեցին՝ հացամթերումները, վարկային ընկերությունն սկսեց փնտրել Յեփստիգնեեին ու նրա ընկերոջը, նրանց հետքն ել չերևաց:

Բայց չե վոր, յերբ նրանք գրքույկ ու փող ելին ստանում, վոչ վոք վարկային ընկերության ներկայացուցչին չասաց, վոր այդ յերկուսը — տեղացի չեն, այլ պարզապես ժուլիներ են, վոր ոգտվում են տեղական կոռպերատիվ աշխատողների դյուրահավատությունից և հիմարությունից:

Անցյալ կոնտրակտացիաների մեծ թերությունն այն եր, վոր զեռևս կարգի չեր ղրված կոնտրակտանտցանողներին գրքույկներ տալու գործը: Կոռպերացիան այդ գրքույկների տալը ուշացնում եր, և հաճախ եր պատահում, վոր կոնտրակտանտները գըրքույկն ստանում ելին այն ժամանակ, յերբ արդեն հացի հարկավոր քանակության մեծ մասն արդեն բերած ելին լինում հանձնելու: Հանձնած հացը գըրքույկում չեր նշանակվում, հանձնողները ըստ կոնտրակտացիայի վերավճար չելին ստանում, իսկ ստացած ավանաներն ել չելին գանձվում:

Այս խառնաշփոթը բավական չեր. կանտրակտանտներն ստիպված ելին վագել կամ գյուղից գյուղ գնալ զանազան վկայականներ ձեռք բերելու համար, վորպեսզի նրանց գրքույկում նշանակելին հանձնած հացի քանակը: Դեպքեր ել են յեղել, վոր կոնտրակտանտցանողը, ժամանակին գրքույկը չստանալով, ճիշտը չփառեր, թե ինքը վորքան հաց պիտի տա պետությանը, իսկ յերբ գրքույկը գալիս եր իր ցեռքը, նոր միայն պարզվում եր վոր այդ գյուղացին իր հացի մի մասն արդեն ծախել ե: Խառնափնթորություն

թյունն առաջանում եր նաև նրանից, վոր հաճախ ամբողջ հացահատիկային ընկերությանը կամ հողային համայնքին միայն մի գրքույկ եր արվում։ Այդպիսի դեպքերում համայնքի (ընկերության) առանձին անդամների մեջ ծագում եյին անվերջ վեճեր այն մասին, թե ամեն մի առանձին տնտեսություն վորքան հաց պիտի հանձնի։

Նման յերկույթների դեմպետք ե անխնա կովել, ընդհանուր ուժերով արմատախիլ անել և ուղղել։ Կոնտրակտացիան հանդիսանում ե պետական մի մեծ գործ, վորի հաջողությունը կախված ե զյուղական հասարակայնության ակտիվությունից և բատրակային, չքավոր ու միջակ լայն մասսաների ակտիվությունից։ յերկու իրար հետ պայմանավորվող կողմերի դեպի պայմանագիրն ունեցած բարեխղճությունից, մանավանդ իրենց վրա վերցրած պարտավորությունների նկատմամբ։

* * *

Կուլակները, տեսնելով վոր կոնտրակտացիան լուրջ աջակցություն ե ցույց տալիս չքավոր տնտեսություններին, ամեն կերպ աշխատում են քանդել ցանքսերի կոնտրակտացիան ու կոլեկտիվացումն, վորպեսզի չքավորությունը դուրս չգա նրանց վաշխառուական կեղեքությց։ Կուլակները գործի յեն գցում իրենց սիրած բոլոր միջոցները՝ սպառնալիք, կաշառք, զըրպալատություն, խմացնել և այլն։ Կուլակները վախեցնում են — «Խորհրդային իշխանությունը, կոնտրակտացիայով կպարզի, թե քանի հեկտար ունես ցանած. դե տապա մի, բեր այստեղ քո բերքը»։

Բայց կոլխոզների, ընկերությունների և հողային համայնքների կոնտրակտացիայի վերաբերմամբ կա-

տարած հարյուր հազարավոր վորոշումները վկայում են այն մասին, թե կուլակության սողոսկումները, նրանց ազիտացիան, վորի նպատակն ե ցանքսերի կոնտրակտացիայի, հետևապես և կոլեկտիվացման քանդելը, — վճռական հակահարված են ստանում բատրակների, չքավորների ու միջակների կողմից։

Կոնտրակտացիան պետք ե ընդգրկի բատրակ, չքավոր ու միջակ տնտեսությունների բոլոր ցանքսերը։ Սա մեծ և գժվար աշխատանք ե պահանջում։ Պետք ե ժամանակին մշակել ամեն ույցնի, ամեն կոլխոզի և հողային համայնքի պլանները, ժամանակին պատրաստել պայմանագրերը, ընտրել լիազորներ, լցնել ու բաժանել կոնտրակտացիոն գրքույկները, ժամանակին պատրաստել սերմացուն, գյուղատնտեսական ինվենտարը և կոլխոզի, ընկերության կամ հողային համայնքի առանձին անդամների մեջ բաշխել աշխատանքային պարտավորությունները։ Առանց նախնական, իր ժամանակին կատարված և մանրակրկիտ պատրաստման՝ կամպանիան հաջողություն չի կարող ունենալ։ Ուստի գյուղական բատրակ-չքավոր ու միջակ կուսակցական ու անկուսակցական ակտիվը, տղամարդ թե կին, տեղական կոոպերատիվ և պետական աշխատավորների հետ միասին պետք ե ամեն ճիգ, ամեն աշխատանք գործ դնեն, վորպեսզի կարողանան կոնտրակտացիայի մեծ և կարևոր աշխատանքը գլուխ բերել։

Առանձին զգոնություն պետք ե ունենալ կուլակների գործնեյության նկատմամբ։ Պաեք ե միշտ հիշել, վոր կուլակությունը ամեն միջոց պետք ե ձեռք առնի, միայն թե քանզի կոնտրակտացիան։ Այդ

պատճառով բարակությունը, միջակների հետ, չքա-
փորությունը, սերտ դաշնակցած պետք ե ամենավճռա-
կան ու ամենաանխնա կոիկ մղեն կուլակների դեմ:

Միայն այս պայմանով կարող ե հաջող լուծումն
ստանալ զյուղատնտեսության սոցիալիստական վերա-
կառուցման խնդիրը, վոր դրած են կոմունիստական
կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը:

ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

ՑԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԵՐԸ

1 կիլոմետրը (կմ)	կազմում	է 1.000 մետր *
1 մետրը (մ)	»	100 սանտիմետր
1 սանտիմետրը (սմ)	»	10 միլիմետր (մմ)

ԾԱՆՅՈՒԹՅԱՆ ԶԱՓԵՐԸ

1 տոննան (տ)	կազմում	է 10 ցենտներ կամ 1.000 կիլոգրամ
1 ցենտները (ց)	»	100 կիլոգրամ
1 կիլոգրամը (կլկ)	»	1.000 գրամ (գր.)

ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ ԶԱՓԵՐԸ

Մեկ հեկտարը (հեկտ. — ուսուերեն գրում են րա)
 $\equiv 10.000$ քառակուսի մետրի

ՀԵՂՈՒԿ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ

1 հեկտոլիտրը (հկլ) $\equiv 100$ լիտրի (լ)

ԼՐԵՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՓԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ՈՌԻՍԱԿԱՆ ԶԱՓԵՐԻ

1 կիլոմետրը	30 սաժենով պակաս ե 1 վերստից
($\equiv 470$ սաժենի).	16 կիլոմետրը $\equiv 15$ վերստի
1 մետրը կազմում	է 22,5 վերշոկ
1 տոննան	$\equiv 61$ վութ, 2 ֆունտ
1 կիլոգրամը	$\equiv 2,4$ ֆունտ (1 ֆունտը $= 400$ գր.)
1 հեկտարը	$\equiv 0,9$ գեոյատին կամ 2.200 քառ. սաժ.
1 հեկտոլիտրը	$\equiv 160$ լիտր
1 լիտրը	$\equiv 1,6$ լիտր

* Փակագծելում () ցույց են տված մետրական չափերի կրճատ նշանակութիւնը, ինչպէս սովորաբար տպված են լինում գրքերում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ կոնտրակտացիան	3
Ինչպիսի ցանքսերն են կոնտրակտացիայի յենթարկվում	4
Կոնտրակտացիան կապիտալիստական յերկրներում և կոնտրակտացիան մեղնում	8
Կոռպերացիայի պարտավորությունները	10
Մեքենա-տրակտորային և ձիա-մեքենային կայաններ .	15
Սերմացուի, ինվենտարի և պարարտանյութերի նախա- պատրաստումն	21
Քաղաքի բանվորների ոգնությունը	23
Կոլխոզների և միավորությունների պարտավորություն- ներն ըստ պայմանագրի	24
Հողային համայնքների և հացահատիկային ընկերու- թյունների պարտավորությունները	33
Կոնտրակտացիայի յենթարկված ցանքսերն	40
Կոնտրակտացիայի ոգուտները	43
Հացի ապրանքայնության մեծացումն	48
Կոնտրակտացիան զարգացնում և անհրաժեշտ կուլտո- րաների ցանքսերը	51
Կոնտրակտացիայի յենթարկել բոլոր բատրակների, չքավորների և միջաների ցանքսերը	55
Մետրական չափերի աղյուսակ	62



50252

15 400.

С. Х.



З. ЗИНОВЬЕВ

Какие выгоды дает кон-
трактация посевов
(Пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0238262

31.947